

Աստուածաշունչի դասապահեր առաջնորդողներու կը տրամադրենք
աստուածաշնչական նիւթերու եւ գիտելիքներու աշխատանքային
օգտակար սոյն ծրագիրը:

ԱՍՏՈՒԾԱԾՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐՈՒ ԵՒ ԴԱՍԱԲԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՅԱՏԱԿԱԳԻԾ

1.- Յիսուսի եւ Անոր Աւետարանին աշակերտելու պայմանները:

Որո՞նք կրնան Զրիստոսի աշակերտ ըլլալ:

ա.- Զրիստոսի ու Անոր աւետարանին կրնան աշակերտիլ բոլոր
անոնք, որոնք իրենց անձը կ'ուրանան եւ Աստուծոյ կամքին կը հետեւին:
Աւետարաններուն մէջ կը կարդանք. «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող
ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ» (Մտթ. 16:24, Մրկ. 8:34,
Ղուկ. 9:23): Իսկ Պօղոս առաքեալ կը վկայակոչէ ըսելով. «Զրիստոսի հետ
խաչին վրայ մեռայ եւ այլեւս կենդանի եմ. ես չէ որ կ'ապրիմ, այլ՝ Զրիստոս է
որ կ'ապրի իմ մէջս: Այս կեանքը, որ այժմ կ'ապրիմ մարմնով, կ'ապրիմ՝
հաւատալով Աստուծոյ Որդիին, որ զիս սիրեց եւ իր կեանքը զոհեց ինծի
համար» (Գաղ. 2:20): Ապա առաքեալը կ'աւելցնէ ըսելով. «Եւ իրաւ, ամէն ինչ
վնաս կը համարեմ՝ համեմատած այն գերազանց շահին հետ, որ մեր Տէրը՝
Յիսուս Զրիստոսը ճանչնալն է: Աստուածային այդ գիտութիւնը ունենալու եւ
Զրիստոսը ճանչնալու համար՝ ամէն ինչ թողուցի, ոչնչութիւն սեպելով,
որպէսզի Զրիստոսը շահիմ, եւ կատարելապէս Անոր միանամ» (Փիլ. 3:8-9):

բ.- Անոնք որոնք իրենց երկրաւոր ստացուածքներէն կը հրաժարին,
յօժար կամքով եւ կ'ընդունին, որ իրենք միայն տնտեսներն են իրենց
ստացուածքներուն: Յիսուս զինք ունկնդրող ժողովուրդին ըսաւ. «Անոնք
որոնք չեն կրնար հրաժարիլ իրենց ամբողջ ունեցածէն, չեն կրնար ինծի
աշակերտ ըլլալ» (Ղուկ. 14:33): Յիսուս այսպէս պատասխանեց
մեծահարուստ երիտասարդին, որ կ'ուզէր Իրեն աշակերտիլ. «Եթէ կ'ուզես
ինծի ախակերտիլ, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր.
այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ՝ հետեւէ՛ ինծի»: Այս
սկզբունքով կ'ապրէին առաջին քրիստոնէաները. «Յաւատացեալներու
ամբողջ բազմութիւնը մէկ սիրտ մէկ հոգի էր: Ոեւէ մէկը իր ինչքերուն
համար չէր ըսեր թէ իրեն են, այլ՝ ամէն ինչ հասարակաց էր իրենց միջեւ»
(Գործք 4:32): Միեւնոյն այս մտածումով, Պետրոս առաքեալ կը խրատէ
հաւատացեալները թելադրելով. «Ձեզմէ իւրաքանչիւրը իբրեւ Աստուծոյ
բազմատեսակ պարգեւներուն իրաւ տնտես՝ իր ստացած շնորհքը
ուրիշներուն թող մատակարարէ» (Ա. Պետր. 4:10): Իսկ Պողոս առաքեալ կը
յուսադրէ հաւատացեալները, քաջալերելով որ, չմտահոգուին իրենց կրած
երկրաւոր չարչարանքներուն եւ նիւթական կորուստներուն համար,
որովհետեւ կ'ըսէ. «Նախատինքի եւ հալածանքի առարկայ եղաք
հրապարակաւ, բանտարկեալներուն չարչարակից եղաք, եւ ձեր
ստացուածքներուն յափշտակուիլը ուրախութեամբ ընդունեցիք, գիտնալով
որ երկինքի մէջ աւելի լաւ ստացուածքներ ունիք, որոնք մնայուն են» (Եբր.
10:33-34):

գ.- Անոնք որոնք Քրիստոսի համար իրենց անձը, սիրելիները եւ կեանքը կ'ուրանան կամ կ'ատեն: Յիսուս զինք ունկնդրող հասարակութեան ըսաւ. «Ով որ ինծի կու գայ եւ զիս անելի չի սիրեր քան իր հայրն ու մայրը, կինն ու զաւակները, եղբայրներն ու քոյրերը, ինչպէս նաեւ իր իսկ անձը, չի կրնար ինծի աշակերտ ըլլալ» (Ղուկ. 14:26): Որովհետեւ «Ով որ իր անձը կը սիրէ՝ կը կորսնցնէ զայն, իսկ ով որ իր անձը կ'անտեսէ այս աշխարհի վրայ՝ զայն յաւիտենական կեանքին համար պահած կ'ըլլայ: Ով որ ուզէ ինծի ծառայել՝ պէտք է ինծի հետեւի, եւ ինծի ծառայողը պիտի ըլլայ հոն՝ ուր ես կը գտնուիմ: Եւ Հայրս պիտի պատուէ ինծի ծառայողը» (Յովհ. 12:25-26): Յիսուս աշակերտներ ընտրելու համար, երբ Գալիլեայի լիճին եզերքը կը շրջեր, «Տեսաւ երկու եղբայրներ, որոնք ձկնորս էին. Սիմոնը՝ որ Պետրոս կը կոչուէր եւ անոր եղբայրը՝ Անդրեասը, որոնք ուռկանը ջուրը կը նետէին ձուկ որսալու համար: Յիսուս ըսաւ անոնց. -Յետեւեցէ՛ք ինծի եւ ես ձեզ մարդու որսորդ պիտի ընեմ: Անոնք անմիջապէս ձգեցին ուռկանները եւ հետեւեցան Յիսուսի» (Մատթ. 4:18-20):

ա.- Քրիստոսի ու Անոր անտարանին կրնան աշակերտիլ բոլոր անոնք, որոնք իրենց անձը կ'ուրանան եւ Աստուծոյ կամքին կը հետեւին (Մտթ. 16:24, Մրկ. 8:34, Ղուկ. 9:23, Գաղ. 2:20, Փիլ. 3:8-9):

բ.-Անոնք որոնք իրենց երկրաւոր ստացուածքներէն կը հրաժարին, յօժար կամքով եւ կ'ընդունին, որ իրենք միայն տնտեսներն են իրենց ստացուածքներուն (Ղուկ. 14:33, Գործք 4:32, Ա. Պետր. 4:10, Եբր. 10:33-34):

գ.- Անոնք որոնք Քրիստոսի համար իրենց անձը, սիրելիները եւ կեանքը կ'ուրանան կամ կ'ատեն: Հոս ատել բառը պէտք չէ բառացի կամ ժխտական իմաստով հասկնալ, այլ կը նշանակէ նուազ յարգանք ցուցաբերել իրի, առարկայի կամ անհատի մը վերաբերմամբ (Ղուկ. 14:26, Յովհ. 12:25-26, Մատթ. 4:18-20):

դ.- Անոնք որոնք զՔրիստոս դաւանելով, մարդոցմէ չարիք կը ստանան եւ անարգանքի կ'արժանանան (Մարկ. 8:34-38, Մատթ. 10:32, Ղուկ. 9:26, 12:8, Բ. Տիմ. 1:8, Հռոմ. 1:16, Բ. Տիմ. 1:12, Ղան. 3:16-18, 6:10-22):

ե.- Անոնք որոնք առանց գայթակղելու, տկարանալու եւ այլոցմէ արհամարհուելու, նոյնիսկ ի գին տուն տեղ կորսնցնելու՝ Քրիստոսի կը հետեւին, առանց ետին նայելու Յովհ. 6:60-68, Մատթ. 11:6, Բ. Կորնթ. 12:10, Ղուկ. 22:33, Հռոմ. 8:35-39, Ղուկ. 9:58, Մատթ. 8:20, Ա. Կորնթ. 9:11, Ղուկ. 9:59-60, Մատթ. 8:21-22, Ղուկ. 9:62):

զ.- Անոնք որոնք յօժարակամ իրենց խաչը շալկած, Քրիստոսի կը հետեւին (Մատթ. 10:38, 16:24, Ղուկ. 9:23, 14:27, Գործք. 14:22, Փիլ. 1:29, Բ. Տիմ. 3:12, Ա. Թես. 3:3, Եբր. 11:25, Բ. Կորնթ. 11:24-29, Գաղ. 2:20, 6:14, Բ. Կորնթ. 1:9):

2.- Քրիստոսի հետեւող Ս. Գրոց աշակերտը ի՞նչ բան պէտք է գիտնայ, նկատի ունենայ եւ զգուշանայ:

Քրիստոսի հետեւող Ս. Գրոց աշակերտը, պետք է գիտնայ հետեւեալ ճշմարտութիւնները, որոնք Աստուծոյ կողմէ Աստուածաշունչի միջոցաւ յայտնուած են.

ա.- Մարդու բնութիւնը, իր երկրաւոր կեանքը եւ գործունեութիւնը ի սկզբանէ, մեղանչական եղած են: Ս. Գրոց աշակերտը, Աստուածաշունչը կարդալով կը գիտնայ թէ Աստուծոյ Քրիստոսի՝ միջոցաւ մարդիկը իրենց մեղքերէն փրկելու եւ յաւիտենական կեանք պարգեւելու փրկագործութեան խորհուրդով միայն, հնարաւոր եւ կարելի կը դառնայ մարդիկը իրենց մեղքերէն ազատագրել, հոգեւոր նոր ծնունդ եւ նոր սկիզբ պարգեւել: Աստուածաշունչ մատեանը վկայակոչելով քաղուածաբար կը կարդանք հետեւեալ համարները. **«Տեր Աստուած տեսաւ թէ մարդոց չարութիւնը երկրի վրայ կը շատնար, եւ անոնց սիրտին մտածումներուն բոլոր նպատակները միայն չար էին ամէն ատեն»** (Ծննդոց 6:5): **«Եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»** (Յովհ.3:3):

«Ինչ որ մարդու ներսդիւն դուրս կ'ելլէ՝ ա՛յն է որ կը պղծէ մարդս: Որովհետեւ մարդուն ներսէն, այսինքն սիրտէն է որ կ'ելլեն չար մտածումները.- շնութիւն, պոռնկութիւն, գողութիւն, սպանութիւն, ազահութիւն, չարութիւն, նենգութիւն, գիշութիւն, չար նախանձ, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն» (Մարկ. 7:20-22): **«Մեղքին վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաւիտենական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ»** (Րոմմ. 6:23): **«Արդարեւ, հազիւ թէ գտնուի մէկը որ յանձն առնէ արդարի մը համար մեռնի, թերեւս գտնուի մէկը որ բարի մարդու մը սիրոյն համարձակի մահը յանձն առնել: Բայց Աստուած մեզի հանդէպ իր սերը յայտնեց անով՝ որ երբ տակաւին մեր մեղքերուն մէջ էինք՝ Քրիստոս մեզի համար մեռաւ»** (Րոմմ. 5:7-8): Նման մտածումներու կարելի է հանդիպիլ աւետարանական հետեւեալ հատուածներուն մէջ. Սղմ. 14:1, Երեմ. 17:9, Յովհ.3:6, Րոմմ. 8:7, Եփես. 2:1-2, Սղմ. 14:3, Ժող. 7:20, Եսայ. 64:6, Րոմմ. 3:10-23, 5:12, Ա.Յովհ. 1:8-10, Մատթ. 18:3, Ղուկ. 13:3, Գաղ. 3:10, Յակ. 1:15, Ա.Յովհ. 3:8, Եզեկ. 33:11, Յովհ. 3:16, Րոմմ. 5:8, Ա.Տիմ. 2:3-4, 11-12, Բ.Պետր. 3:9, Յովհ. 4:10, Եսայ. 53:5, Մատթ. 20:28, Րոմմ. 5:7, Ա.Կորնթ. 15:3, Բ.Կորնթ. 5:21, Գաղ. 3:13, Ա.Պետր. 2:24, Ելից 12:13, Ղեւտ. 17:11, Մատթ. 26:28, Եփես. 1:7, Ա.Պետր. 1:18-19, Ա.Յովհ. 1:7, Յայտ. 5:9):

բ.- Մեղաւորին ըրած Յիսուսի հրաւերը: Մեր Տերը Յիսուս Քրիստոս, ո՛չ միայն կը զգուշացնէ, այլեւ կը հրաւիրէ մեղաւորը ապաշխարելու եւ վերանորոգ, ապաշխար կեանք ապրելու: **«Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել: Բայց դուք վախցէք մանաւանդ անկէ, որ կրնայ թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորուստի մատնել դժոխքին մէջ»** (Մատթեոս 11:28): **«Եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»** (Յովհ.3:3): **«Բոլոր անոնք որ Յայրը ինծի կու տայ՝ ինծի պիտի գան, եւ ես ինծի եկողը պիտի չմերժեմ»** (Յովհաննէս 6:37): **«Ե՛ս եմ դուռը: Ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի. պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ»** (Յովհաննէս 10:9):

գ.- Զրիստոսի կարողութիւնը մեղաւորը արդարացնելու եւ փրկելու: Աստուածորդի Յիսուս Փրկիչ, միակն է, որ կարողութիւնը ունի մեր մեղքերը քաւելու, վերստին որդեգրութեան արժանացնելու եւ փրկելու: Յետեւաբար բոլոր անոնք, որոնք Զրիստոսը Տէր եւ Փրկիչ կը դաւանին՝ փրկութեան կ'արժանանան: «Յիսուս կրնայ փրկել անոնք՝ որոնք իր միջոցաւ Աստուծոյ կու գան, որովհետեւ Զրիստոս միշտ կենդանի ըլլալով՝ տեւաբար բարեխօս կ'ըլլայ անոնց համար» (Եբրայեցիս 7:25): «Յիսուս Զրիստոս ամեն ինչով պետք էր իր «եղբայր»ներուն նման ըլլար, որպէսզի կարենար ողորմած եւ վստահելի քահանայապետ մը ըլլալ Աստուծոյ քով, Աստուծոյ ժողովուրդին մեղքերը քաւելու համար: Ինք չարչարուելով փորձուեցաւ, կրնայ օգնել փորձութեան մէջ եղողներուն» (Եբրայեցիս 2:17-18): «Աստուած իր խոստումը կը կատարէ...Աստուած մե՛զ եւս արդար պիտի համարէ մեր հաւատքին համար, որովհետեւ կը հաւատանք իրեն՝ որ մեռելներէն յարուցանեց Յիսուսը, մեր Տէրը, որ իր կեանքը տուաւ մեր յանցանքները ջնջելու համար, եւ յարութիւն առաւ՝ մեզ արդարացնելու համար» (Յռոմայեցիներուն 4:21, 22, 24-25): «Արդ, անոր՝ որ կրնայ ձեզ անկումներէ փրկել, պահել պահել անարատ եւ անբիծ, եւ անխառն ուրախութեամբ լեցուն՝ իր փառաւոր ներկայութեան կանգնեցնել, միակ Աստուծոյն՝ որ մեր փրկիչն է՝ փա՛ռք տուէք, մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի միջոցաւ» (Յուդա 24-25):

դ.- Մեղաւորը ի՞նչ ընելու է փրկուելու համար յաւիտենական կորուստէ: Մեղաւորը փրկուելու համար յաւիտենական կորուստէ, հաւատալու եւ մկրտուելու է Ամենասուրբ Երրորդութեան անունով: Մեր Տէրը Յիսուս Զրիստոս կը պատգամէ. «Չացէք ամբողջ աշխարհը եւ բոլոր մարդոց քարոզեցէք Աւետարանը: Ով որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի, իսկ ով որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի» (Մարկոս 16:16): «Աստուած իր Որդին աշխարհի դրկեց՝ ո՛չ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար» (Յովհաննէս 3:16-18): «Ով որ կը հաւատայ Որդիին՝ յաւիտենական կեանքը կ'ունենայ, իսկ ան որ չի հնազանդիր Որդիին՝ կեանք պիտի չունենայ, այլ՝ Աստուծոյ պատիժը պիտի գայ անոր վրայ» (Յովհաննէս 3:36): «Ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք, եթէ չհաւատաք թէ Ես եմ» (Յովհաննէս 8:24): «Անիկա (Յիսուս), բոցավառ կրակով պիտի պատժէ անոնք՝ որոնք կը մերժեն զԱստուած ճանչնալ եւ հնազանդիլ մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի Աւետարանին» (Բ. Թեսաղոնիկեցիս 1:8):

ե.- Զրիստոնեայ հաւատացեալը ինչպե՞ս կրնայ գիտնալ թէ փրկուած է, կամ փրկութեան ի՞նչ երաշխիք ունի: Հաւատացեալը կը յուսադրուի ավետարանական հետեւեալ ճշմարտութիւններու երաշխիքով. «Լաւ գիտցէք, ով որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր՝ որ զիս դրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է» (Յովհաննէս 5:24): «Ով որ ինձի (Յիսուսի)

հաւատայ՝ յաւիտենական կեանք ունի» (Յովհաննէս 6:47): «Ես (Յիսուս) անոնց յաւիտենական կեանք կու տամ. անոնք բնաւ պիտի չկորսուին» (Յովհաննէս 10:28): «Ով որ Աստուծոյ Որդին իր մէջ ընդունած է՝ այդ կեանքը ունի. իսկ ով որ չունի Որդին՝ յաւիտենական կեանք ալ չունի: Ասիկա գրեցի ձեզի, Աստուծոյ Որդին հաւատացողներուդ, որպէսզի գիտակցիք՝ թէ յաւիտենական կեանք ունիք» (Ա. Յովհաննէս 5:12-13):

Յետեւաբար Ս. Գրոց դասընթացքներուն հետեւողը, պետք է ըլլայ ճշմարիտ քրիստոնէայ: Մարդասէր Աստուծոյ վստահած անկեղծ հաւատացեալ: Իր գործերը խօսքին համապատասխանող, հաւատարիմ, գործօն, ներողամիտ, առատաձեռն, յուսալից, իմաստուն, անխարդախ, քաղցրաբարոյ, սիրով առլցուն, ողորմած, աղքատասէր, աղօթասէր, արթուն, լրջախոհ, անձնագոհ, հանապազ գոհութիւն եւ փառք տուող, քիչով գոհացող, նախանձախնդիր, համբերող, երկայնամիտ եւ ժրաշան (Բ. Տիմ. 1:12, Սաղմ. 119, 111-112, Ա. Տիմ. 4:12, Ժող. 12:13, 9:10, Եփես. 4:32, Բ. Կորնթ. 9:6-7, Յռոմ. 8:24, Առակ. 4:7-9, Փիլ. 4:8, Ա. Կորնթ. 13:4-5, Մտթ. 6:6, Ղուկ. 18:1, Սաղմ. 119:25,35, Ժող. 5:1-2, Փիլ. 2:5-8, 4:6, Բ. Պետր. 1:5-8, Յռոմ. 8:37-39, Բ. Տիմ. 2:15):

Միաժամանակ Ս. Գրոց աշակերտը եւ Քրիստոսի ճշմարիտ հետեւողը, պետք է հետեւեալ մոլութիւններէն, երեւոյթներէ, արարքներէ եւ անձերէ զգուշանայ:

ա.- Չմոռնալ, չանտեսել Աստուծոյ խօսքերն ու պատուիրանները: (Բ. Օրինաց 8:11, 6:12, Ելից 23:21):

բ.- Չզուլանալու է գինեմոլութենէ, հեշտասիրութենէ եւ երկրաւոր հաճոյքներու անձնատուութենէ: (Դատ. 13:4, Բ.Տիմ. 3:4, Մատթ. 13:22):

գ.- Չզուլանալու է ինքզինք արդարացնելէ, կեղծաւորութենէ, սրտի թելադրութիւններով առաջնորդուելէ, չար մշակներէ, սուտ մարգարէներէ: (Մատթ. 7:16:6, Մարկ. 8:15, Ղուկ. 12:1, Երեմ. 17:9, Փիլ. 3:2, Մատթ. 7:15, 24:11, Մարկ. 13:22, Ղուկ. 6:26, Բ.Պետր. 2:1, Ա. Յովհ. 4:1, Բ. Կորնթ. 11:13, Սաղմ. 119:105):

դ.- Պետք է զգուշանայ նաեւ բոլոր անոնցմէ, որոնք դատարկախօսութեամբ, սոփեստութիւններով կամ փիլիսոփայական փունձ տեսութիւններով կը փորձեն հրապուրել, խաբել ու հաւատացեալը Աստուծմէ հեռացնել: (Կող. 2:8, Առակ. 19:27, Բ. Պետր. 3:17):

ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ

Ա.- Ի՞նչ է վերստին ծնունդը:

1.- Վերստին ծնունդը հոգեւորապէս վերանորոգուիլ ու նոր արարած ըլլալ է: Մեղքի մէջ մահացածները, վերստին ծնունդով, հոգեփոփոխութեան ենթարկուելով, մահէն դէպի հոգեւոր նոր կեանքի կը բացուին: Աւետարանական հատուածները այս գաղափարն է որ կը շեշտեն. հոն կը կարդանք.-

«ՈՒԷ մԷԿը որ Զրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլևս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապես, որովհետև ամբողջությամբ նորոգուեցաւ» (Բ Կորնթ. 5:17):

Պօղոս առաքեալ նորադարձ քրիստոնեաներուն կը յիշեցնէ ըսելով. «Անցեալին դուք հոգեւորապես մեռած էիք ձեր յանցանքներուն եւ մեղքերուն հետեւանքով: Այդ մեղքերով կ'ապրէիք, այս աշխարհի սովորութեան համաձայն, ենթարկուելով Սատանային, որ մթնոլորտին մէջ գործող ոգեղէն ոյժերուն իշխանն է, եւ ներկայիս կը գործէ Աստուծոյ անհնազանդ մարդոց մէջ: Ժամանակ մը մենք բոլորս ալ նոյնպէս անհնազանդ էինք եւ մարդկային բնութեան յատուկ ցանկութիւններով կ'ապրէինք՝ մեր մարմինին ու մտքին բոլոր փափաքները կատարելով, եւ իրապէս Աստուծոյ պատիժին արժանի էինք, միւսներուն պէս» (Եփես. 2:1-5):

Իսկ Յակոբոս առաքեալ վերստին ծնունդի մասին խօսելով կը յիշեցնէ.

«Աստուած կամեցաւ մեզ վերստին ծնիլ՝ որպէսզի իր ճշմարիտ նպատակը յայտնուի, որովհետև կ'ուզէ որ մենք իր նոր ստեղծագործութեան առաջին պտուղները ըլլանք» (Յակոբոս 1:23): Վերստին ծնունդը Պօղոս առաքեալի համաձայն, կ'իրագործուի ոչ թէ բարի կամ արդար գործերով, այլ Մկրտութեամբ եւ Ս. Յոգիի ստացումով, որով ենթական հոգեփոխութիւն ունենալով նոր արարած կը դառնայ: «Մեր Փրկիչը իր քաղցրութիւնն ու մարդասիրութիւնը յայտնեց եւ մեզ փրկեց, ո՛չ թէ մեր կատարած արդար գործերուն համար, այլ՝ պարզապէս ողորմած ըլլալուն համար: Մեզի նոր ծնունդ տուաւ մկրտութեամբ եւ Ս. Յոգիին միջոցաւ մեզ վերանորոգեց» (Տիտոս 3:4-5):

Մեր Տէրը Յիսուս Զրիստոս ապաշխարութեան, վերստին ծնունդի եւ յաւիտենական կեանքի շուրջ Նիկոդեմոսի հետ իր խօսակցութեան ընթացքին կը յիշեցնէ. «Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը... Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Յոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել» (Յովհաննէս 3:3,5):

2.- Զրիստոնեական հասկացողութեամբ վերստին ծնունդը մտքի, խորհուրդներու, զգացումներու եւ ապրելակերպի վերանորոգում է: Պօղոս առաքեալ այս ճշմարտութիւնը հաստատելով կը վկայէ. «Եղբայրներ... այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն ու կատարեալ» (Ռոմեացիս 12:2): Միաժամանակ կը յիշեցնէ Աստուծոյ անբաւ մարդասիրութիւնը երբ կը յայտարարէ. «Մեր Փրկիչը, իր քաղցրութիւնն ու մարդասիրութիւնը յայտնեց ու մեզ փրկեց, ո՛չ թէ մեր կատարած արդար գործերուն համար, այլ՝ պարզապէս ողորմած ըլլալուն համար: Մեզի նոր ծնունդ տուաւ մկրտութեամբ եւ Սուրբ Յոգիին միջոցաւ մեզ վերանորոգեց» (Տիտոս 3:4-5):

3.- Վերստին ծնունդը կը վերանորոգէ մեր հին, մեղանչական բնութիւնը. որով հոգեւոր նոր բնութիւն զգեցած, մեզ հաղորդակից կը դարձնէ Աստուծոյ բնութեան հետ: Առանց հոգեւոր ծնունդի մարդ կոյր է մտքով, հոգիով ու կամքով՝ չար: Զրիստոնէական աստուածապաշտ, ճշմարիտ կեանքի եւ կոչումի մասին Պետրոս եւ Պօղոս առաքեալներ կը վկայեն ճշմարելով. «Զրիստոս իր աստուծային զօրութեամբ մեզի պարգեւեց ամէն ինչ որ անհրաժեշտ է աստուածապաշտ կեանքի մը համար, մեզի ճանչցնելով ան՝ որ իր փառքովն ու զօրութեամբը մեզ իրեն կանչեց: Անիկա թանկագին ու մեծամեծ խոստումներ տուաւ մեզի, որպէսզի անոնցմով հաղորդակից ըլլանք աստուծային բնութեան, ձերբազատուելով աշխարհի մէջ տիրող կորստաբեր ցանկութիւններէն» (Բ. Պետրոս 1:3-4): «Թելադրանքս է, որ Սուրբ Յոգիով առաջնորդուիք, փոխանակ մեղանչական բնութեան յատուկ ցանկութիւնները կատարեք: Որովհետեւ մեղանչական բնութիւնը Սուրբ Յոգիին ցանկացածին հակառակն է որ կը ցանկայ, իսկ Սուրբ Յոգին՝ մեղանչական բնութեան ցանկացածին հակառակը: ... Անոնք որոնք Զրիստոսի կը պատկանին՝ իրենց մարդկային կիրքերն ու ցանկութիւնները խաչին վրայ մահացուցին: Արդ, քանի Սուրբ Յոգիով այս նոր կեանքը կ'ապրինք, նաեւ Սուրբ Յոգիով առաջնորդուինք: Զըլլանք սնապարծ, չգրգռենք իրար, չնախանձինք իրարու» (Գաղատացիս 5:16-17, 24-26): «Որովհետեւ մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է եւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ: Ահա թէ ինչու, անոնք որ մարմնականին կը հետեւին՝ Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ» (Յռոմայեցիս 8:7-8):

Յետեւաբար, Աւետարանի վկայութեամբ, վերստին ծնունդը մեզ հաղորդակից դարձնելով Աստուծոյ բնութեան ու Անոր Յոգիին հետ՝ նոր արարածներու կը փոխակերպէ: Այս մասին խօսելով Պօղոս առաքեալ, Կողոսացիներուն գրած իր նամակին մէջ հետեւեալը կը պատգամէ. «Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զինք ճանչնալ» (Կող. 3:10): Ապա յուսադրելով կը պատուիրէ. «Ով որ Աստուծոյ զաւակ դարձած է՝ մեղք չի գործեր, որովհետեւ Աստուծոյ կեանքին հաղորդակից կը մնայ: Այլեւս կը դադրի մեղանչելէ, քանի Աստուծոյ զաւակ կը դառնայ» (Ա Յովհաննէս 3:9):

«Ոեւէ մէկը որ Զրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ: Եւ այս նորոգութիւնը կու գայ Աստուծմէ, որ Զրիստոսի միջոցաւ մեզ իրեն հետ հաշտեցուց եւ նաեւ պաշտօն տուաւ մեզի՝ ուրիշներն ալ հաշտութեան բերելու: Աստուած ինքն էր որ Զրիստոսի միջոցաւ աշխարհը հաշտեցուց իրեն հետ, անյիշաչար գտնուելով մարդոց մեղքերուն հանդէպ, եւ մեզի պաշտօն տուաւ՝ որ այս հաշտութիւնը պատգամենք բոլոր մարդոց: ...Որովհետեւ Աստուած մեզի համար մեղքի պատարագ ըրաւ Զրիստոսը,

ան՝ որ բնաւ մեղք չէր գործած, որպէսզի մենք անոր միանալով արդարանանք Աստուծոյ համար» (Բ. Կորնթ. 5:17-19,21):

Բ.- Ի՞նչ են վերստին ծննդեան հետեւանքները:

Անցեալ թիով, անտարանական հատուածներով, տեսանք թէ **վերստին ծնունդը** Քրիստոսի հաւատալ է եւ որպէս Տէր ու Փրկիչ խոստովանիլ, ընդունիլ եւ վկայել է: Որով վերստին ծնունդ ունեցողը, Քրիստոսով հոգեւորապէս կը վերանորոգուի, իր հին մեղանչական բնութիւնը հոգեւոր նոր բնութիւն կը զգենու եւ նոր արարած կ'ըլլայ: Մեղքի մէջ մահացածները, վերստին ծնունդով, հոգեփոփոխութեան ենթարկուելով, մահէն դէպի հոգեւոր նոր կեանքի կը բացուին: Քրիստոնեական հասկացողութեամբ, վերստին ծնունդը մտքի, խորհուրդներու, զգացումներու եւ ապրելակերպի վերանորոգում է: Հոգեւոր նոր բնութիւն զգեցած մարդը հաղորդակից կը դառնայ Աստուծոյ բնութեան հետ:

Հետեւաբար ան որ վերստին ծնած է Աստուծոյ Ս. Հոգիէն՝ տաճար եւ բնակարան կը դառնայ Աստուծոյ: Թէեւ ան իր նախկին ֆիզիքական բնութեան մէջ կ'ապրի, սակայն մեղքը նուաճած՝ անոր իշխանութեան, մղումներուն, ձգտումներուն եւ պահանջքներուն ներքեւ չ'ապրիր: Շնորհիւ Քրիստոսի ու Անոր հոգեւոր զօրութեան ապաւինելով, հնարաւոր կը դառնայ մեղքի տիրապետութենէն ձերբազատուիլ, որով մեղքը կը յաղթուի եւ կը նուաճուի: Պօղոս առաքեալ այս մասին անդրադառնալով, քրիստոնեական հաւատքը ընդունած Կորնթացիները կը զգուշացնէ, յիշեցնելով. «**Չ՞եք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք, եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ:.. Ձեր մարմինները տաճարն են Ս. Հոգիին որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի: Գիտցէք որ դուք չ'էք ձեր անձերուն տէրը, այլ Աստուած՝ որ փրկագինով ձեզ գնեց: Հետեւաբար այնպէս ապրեցէք՝ որ Աստուած փառաւորուի ձեր մարմիններով**» (Ա. Կորնթացիս 3:16, 6:19-20): Ապա առաքեալը մարմնական ցանկութեամբ ապրողները կը զգուշացնէ խրատելով. «**Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը դեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնա որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է: Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեկանը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ: Ահա թէ ինչու, անոնք որ մարմնականին կը հետեւին՝ Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ: Եթէ իրապէս անոնք որ մարմնականին կը հետեւին՝ Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ: Եթէ իրապէս Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, կը նշանակէ՝ թէ դուք այլեւս մարմնական ցանկութիւններուն համաձայն չ'եք ապրիր, այլ՝ Սուրբ Հոգիին կամեցած ձեւով: Իսկ ով որ Քրիստոսի Հոգին չունի, անոր չի պատկանիր: ...Որովհետեւ եթէ մարմնաւորապէս ապրիք՝ պիտի մեռնիք. իսկ եթէ Հոգիին օգնութեամբ ձեր մեղքերը սպաննէք՝ պիտի ապրիք**» (Հռոմայեցիս 8:5-9, 13):

Ըստ Պետրոս առաքելին, վերստին ծնածը՝ նորածին մանկան պես է, հոգեւորապես աճելու համար, հոգեւոր սնունդի պէտք ունի: Չսայթագելու եւ չմոլորելու համար, առաքելը հաւատացեալները կը խրախուսէ, որ հետամուտ ըլլան Աստուծոյ խօսքին, ուսուցումներուն եւ նուիրուին Ս. Գրոց ընթերցման. **«Մէկդի՛ ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք»** (Ա. Պետրոս 2: 1-2): Իսկ Պողոս առաքելը հրաւեր եւ կոչ կ'ուղղէ, որ հաւատացեալներ հոգեւորապես աճելէ եւ հաւատքի մէջ չափահաս դառնալէ ետք, Աստուծոյ ծառայութեան եւ Աւետարանի քարոզութեան նուիրուին, որպէսզի Զրիստոսի մարմինը՝ եկեղեցին աճի ու զօրանայ եւ բոլորը հասնին հաւատքի չափահասութեան, Զրիստոսի կատարեալ նմանութեան: **«Որպէսզի ասկէ ետք չնմանիք երեխաներու, որոնք ալիքներու հետ կը տարուբերին եւ զանազան վարդապետութեանց հովերէն կը քշուին խաբէբայ մարդոց կողմէ, որոնք խորամանկ հնարքներով կը խաբեն ու կը մոլորեցնեն: Այլ՝ ապրինք ճշմարտութեան համաձայն, սիրով եւ հետզհետէ աճինք Զրիստոսի հետ մեր միութեան մէջ, որովհետեւ Ի՛նքն է գլուխը»** (Եփեսացիս 4:14-15):

Վերստին ծնածը՝ հոգեփոխուած, բարեշրջուած ու նոր մարդ է գիտութեամբ եւ Աստուծոյ պատկերին նմանութեամբ: Ան կը հաւատայ թէ Յիսուս Զրիստոսն է իր փրկիչը, ու կ'ապրի Ս. Յոգիի հնազանդութեան, ազդեցութեան եւ սիրոյն ներքեւ: Մկրտուած ու նորոգուած կեանքով, վերստին ծնածը կը ջանայ մեղք չգործել, կ'աշխատի որ իր կեանքը մեղքով չտիրապետուի, չտիրապետուի, ո՛չ ալ մեղքի մէջ յարատեւէ, այլ իր կեանքը Զրիստոսով տիրապետուի, արդարութիւն գործէ ու հետամտի բարութեան եւ առաքինի կենցաղի:

Պողոս առաքելը հաստատելով այս մտածումները կը քաջալերէ, որ Ս. Յոգիի պարգեւներով օժտուած եւ Մկրտութեան Ս. Աւագանէն վերածնած հաւատացեալները աստուածանաչութեան մէջ զարգանան, սրբուին, հոգիով վերանորոգուին եւ Աստուծոյ որդիները ըլլան: **«Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէ՛ք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զինք ճանչնալ»** (Կողոսացիս 3:10): **«Եթէ զԱստուած կը սիրենք եւ Անոր պատուիրանները կը կատարենք՝ կը նշանակէ թէ կը սիրենք նաեւ Աստուծոյ զաւակները: Արդարեւ, Աստուծոյ հանդէպ մեր սերը կ'արտայայտենք՝ Անոր պատուիրանները գործադրելով: Իսկ Անոր պատուիրանները գործադրելը դժուար չէ, որովհետեւ ով որ Աստուծմէ ծնած է՝ կը յաղթէ աշխարհին: Եւ աշխարհին վրայ յաղթանակ տանողը մեր հաւատքն է»** (Ա Յովհաննէս 5:2-4): **«Աստուած զինք ընդունողներուն եւ Իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմնի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով»** (Յովհաննէս 1:12-13):

ԱՆՐԱԺԵՇՏ ՈՒ ԿԱՐԵՒՐ Ե ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ

Այո՛, որովհետեւ եթէ անհատ մը չէ ապաշխարած ու վերստին չէ ծնած, այլ խօսքով եթէ չէ մկրտուած՝ չի՛ կրնար արժանանալ կամ տեսնել Աստուծոյ արքայութիւնը: Զետեւաբար մկրտութիւնը կամ վերստին ծնունդը պայման է Աստուծոյ արքայութեան արժանանալու: Միաժամանակ վերստին ծնունդը կամ Աստուծոյ Զոգիէն վերածնելու համար, հարկաւոր է.

ա.- մեղքերու խոստովանութիւնը, բ.- գղջումը եւ գ.- ապաշխարութիւնը: Յովհաննէս առաքեալ այս մասին խօսելով կ'անդրադառնայ Յիսուսի եւ Նիկողեմոսի միջեւ կատարուած գիշերային խօսակցութեան եւ փոխ առնելով Յիսուսի պատուերը կը թելադրէ. «Լաւ գիտցիր Նիկողեմոս, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»: Նիկողեմոս հարցուց Յիսուսի. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ ծնիլ: Կարելի՞ բան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»: Յիսուս պատասխանեց. «Զաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Զոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պետք է վերստին ծնիք» (Յովհաննէս 3: 3-7):

Ինչպէ՞ս կարելի է մարդ վերստին ծնանիլ:

ա.- Ս. Զոգիի սրբարար ներգործութեամբ: Աստուծոյ կենդանարար ու նորոգող ուժով, ու այս՝ ոչ թէ արիւնէ կամ մարդկային կամքով այլ Աստուծոյ կամքով: Պօղոս առաքեալ Տիտոսի գրած իր նակակին մէջ այս մասին խօսելով կը վկայէ. «Աստուած, մեր Փրկիչը, իր քաղցրութիւնն ու մարդասիրութիւնը յայտնեց եւ մեզ փրկեց, ո՛չ թէ մեր կատարած արդար գործերուն համար, այլ՝ պարզապէս ողորմած ըլլալուն համար: Մեզի նոր ծնունդ տուաւ մկրտութեամբ եւ Սուրբ Զոգիին միջոցաւ մեզ վերանորոգեց (Տիտոս 3:4-5): Նոյն մտածումը կ'արտայայտէ նաեւ Յակոբոս առաքեալ երբ խրախուսելով Քրիստոսի հետեւորդները կը վկայէ. «Աստուած կամեցաւ մեզ վերստին ծնիլ՝ որպէսզի իր ճշմարիտ նպատակը յայտնուի, որովհետեւ կ'ուզէ որ մենք իր նոր ստեղծագործութեան առաջին պտուղները ըլլանք» (Յակոբոս 1:18): Նմանապէս Պետրոս առաքեալ, քաջալերելով նորադարձ քրիստոնէաները կը խրախուսէ. «Արդ, դուք որ ճշմարտութեան հնազանդելով սրբեցիք ձեր անձերը, որպէսզի անկեղծ եղբայրսիրութեամբ ապրիք, սրտանց սիրեցէ՛ք իրար, մաքուր սրտով: Որովհետեւ Աստուծոյ կենդանի եւ մշտնջենական խօսքով վերստին ծնաք, դուք, իբրեւ զաւակները ո՛չ թէ մահկանացու ծնողքի մը, այլ՝ անմահին: Որովհետեւ "Բոլոր մարդիկ խոտի պէս են, իրենց ամբողջ փամբն ալ՝ վայրի ծաղիկին պէս: Խոտը կը չորնայ եւ ծաղիկը կը թափի, բայց Տիրոջ խօսքը յաւիտեան կը մնայ:" Այդ խօսքը այն Աւետարանն է, որ ձեզի քարոզուեցաւ» (Ա. Պետրոս 1:22-23):

բ.- Քրիստոսի Աւետարանը, որ Աստուծոյ ճշմարիտ խօսքն է, մեզ կ'առաջնորդէ եւ կը մղէ որ ապաշխարենք եւ վերստին ծնինք:

գ.- Հաւատալով եւ Յիսուս Քրիստոսը որպէս Տէր եւ Փրկիչ ընդունելով՝ Աստուծոյ որդեգիր գաւակները կ'ըլլանք:

Մահկանացու մեր մարդկային բնութեան մէջ մեղքը, որպէս մահաբեր թոյն, մեր երակներուն մէջ կը շրջի, նման այն խորայելացիներուն, որոնք անապատին մէջ օձէն խայթուելով կը մեռնէին: Սակայն Քրիստոսը խորհրդանշող պղինձէ օձին երբ հաւատքով որ նայէին, կը բժշկուէին, իրենց երակներուն մէջ նոր կեանք եւ արիւն կը շրջէր: Նոյնպէս ալ մենք մեղքի թոյնով մեռածներս երբ հաւատքով Քրիստոսի նայինք եւ ընդունինք զինք որպէս մեր Փրկիչը՝ կը փրկուինք, նոր կեանքի մը կը կոչուինք եւ վերակենդանանալով՝ Քրիստոսի Հոգիէն վերստին կը ծնինք: Առաքեալներ այս ճշմարտութիւնը բառացուցելով կը վկայեն. «Յիսուս Քրիստոսի հաւատալով՝ բոլորդ ալ Աստուծոյ որդիներ եղաք: Անգամ մը որ Քրիստոսի միանալով մկրտուեցաք, այլեւս Քրիստոս է որ կ'ապրի ձեր մէջ» Գաղատացիս 3: 26):

«Քրիստոս զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով» (Յովհաննէս 1:12-13):

«Ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պետք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ» (Յովհաննէս 3:14-16):

«Որեւէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արտարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ: Եւ այս նորոգութիւնը կու գայ Աստուծմէ, որ Քրիստոսի միջոցաւ մեզ իրեն հետ հաշտեցուց եւ նաեւ պաշտօն տուաւ մեզի՝ ուրիշներն ալ հաշտութեան բերելու» (Բ. Կորնթացիս 5:17):

գ.- Աստուծոյ խօսքը եւ Աւետարանին բարի սերմերը Ս. Հոգիի զօրութեամբ կը ծլարձակուին եւ մեր սրտերուն մէջ կենաց կեանքի որդեգրութեան եւ փրկութեան երաշխիքը կ'ապահովեն: Որովհետեւ Քրիստոսի եւ առաքեալներու վկայութեամբ, Աստուծոյ խօսքը կեանք եւ աւիշ տուող այն սերմն է, որ մեզ նոր ու վերանորոգուած կեանքի կը կոչէ, վերածելով մեր սիրտը Աւետարանին Բարի Սերմերու ընդունարանին, պարարտ այն հողին, որ Աստուած իր Ս. Հոգիի զօրութեամբ, ակօսներ կը բանայ ու կենաց յաւիտենական կեանքի արքայութեան սերմերը հոն կը ցանէ: Որպէսզի հաւատացողը փրկուի, նոր արարած դառնայ եւ մահէն կեանքի փոխակերպուի եւ յաւիտենական կեանքի արժանանայ: Ուսանելի եւ նպատակայարմար է այս առթիւ կարդալ (Մատթէոսի 13:1-23, Մարկոսի 4:1-20 եւ Դուկասի 8:4-15) աւետարաններուն մէջ Քրիստոսի պատմած ու մեկնած Սերմնացանին առակը, ուր Քրիստոս պատմելէ ետք առակը հետեւեալ ուսանելի բացատրութիւնը կու տայ. «Սերմը Աստուծոյ խօսքն է: Ճամբուն եզերքը գտնուող հողը պատկերն է այն մարդոց, որոնք կը լսեն, սակայն Սատանան գալով անոնց սիրտէն կը հանէ Աստուծոյ խօսքը, որպէսզի չհաւատան եւ չփրկուին: Ժայռոտ հողը նմանութիւնն է անոնց,

որոնք երբ կը լսեն Աստուծոյ խօսքը՝ ուրախութեամբ կ'ընդունին. սակայն ասոնք արմատ չունին, այսինքն՝ ժամանակուան մը համար կը հաւատան եւ փորձութեան ժամանակ կը հեռանան: Փուշերով ծածկուած հողը կը նմանի այն մարդոց, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն, սակայն երկրաւոր կեանքի հոգերը, հարստութիւնը եւ հաճոյքները, որոնցմով կ'ապրին՝ կը խեղդեն իրենց մէջ ինկած սերմերը եւ անպտուղ կը դառնան: Իսկ պարարտ հողը կը նմանի այն մարդոց, որոնք բարի եւ ուրախ սիրտով կը լսեն Աստուծոյ խօսքը ու կ'ընդունին զայն, եւ յարատեւելով՝ պտուղ կու տան»:

ՀԱՄԱՏԱՑԵԱԼԸ ԿՐՆԱՅ ԳԻՏԱԿ ԿԱՍ ԻՆՉ ԱՊԱՅՈՎՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ԹԵ ՓՐԿՈՒԱԾ Է ԵՒ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ ՈՒՆԻ

Այո՛, Աստուծոյ Որդւոյն Յիսուս Զրիստոսի հաւատացողներ եւ որպէս Օծեալ Տէր եւ Փրկիչ դաւանողներ, վստահութիւնը եւ ապահովութիւնը պէտք է ունենան թէ յաւիտենական կեանք ունին: Այս մասին Պօղոս առաքեալ խօսելով, կը քաջալերէ հաւատացեալները եւ յուսադրելով կը յայտարարէ. **«Աստուած յաւիտենական կեանք տուաւ մեզի, եւ այդ կեանքին աղբիւրը Որդին ինքն է: Հետեւաբար, ով որ Աստուծոյ Որդին իր մէջ ընդունած է՝ այդ կեանքը ունի. իսկ ով որ չունի Որդին՝ յաւիտենական կեանք ալ չունի: Ասիկա գրեցի ձեզի, Աստուծոյ Որդիին հաւատացողներուդ, որպէսզի գիտակցիք՝ թէ յաւիտենական կեանք ունիք»** (Ա. Յովհաննէս 5:11-13): Որովհետեւ, մեր Տէր Յիսուս Զրիստոսը որպէս Աստուածորդի եւ Փրկիչ ընդունողը, ոչ միայն փրկութեան երաշխիքը կ'ունենայ, այլեւ՝ կ'արդարանայ իր բոլոր մեղքերէն եւ Աստուծոյ որդեգիրը կը դառնայ: Դուկաս աւետարանիչ իր Գործք Առաքելոց գիրքին մէջ Զրիստոսի յարութեան եւ աստուածութեան հաւատացողներուն կը պատգամէ յուսադրելով. **«Իմացէ՛ք եղբայրներ, Յիսուսի միջոցաւ մեղքերու թողութիւն կը քարոզուի ձեզի: Ով որ Անոր կը հաւատայ՝ կ'արդարանայ իր բոլոր մեղքերէն, որոնցմէ չկրցաք արդարանալ Մովսէսի Օրէնքին միջոցաւ»** (Գործք Առաքելոց 13:38-39): Նոյնպէս Յովհաննէս առաքեալ կը հաստատէ մեղքերու թողութեան, փրկութեան եւ որդեգրութեան խոստումը, որ պիտի տրուի բոլոր անոնց, որոնք Զրիստոսը կ'ընդունին եւ զինք կը դաւանին որպէս Տէր եւ Փրկիչ. **«Զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով»** (Յովհաննէս 1:12): Ապա առաքեալը հաւատացեալներուն կը թելադրէ հնազանդիլ Զրիստոսի, պատգամելով. **«Ով որ կը հաւատայ Որդիին՝ յաւիտենական կեանքը կ'ունենայ, իսկ ան որ չի հնազանդիր Որդիին՝ կեանք պիտի չունենայ, այլ՝ Աստուծոյ պատիժը պիտի գայ անոր վրայ»** (Յովհաննէս 3:36): Մեր Տէրը Յիսուս Զրիստոս կը պատուիրէ զինք ունկնդրող բազմութեան ուսուցանելով. **«Լաւ գիտցէք, ով որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ Անոր՝ որ զիս զիս դրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է»**

(Յովհաննես 5:24, 6:47): Իսկ Ղուկաս անտարանիչ, Քրիստոսով մեղքերու քաւութիւն ստանալու մասին խօսելով, կը մեջբերէ Պետրոս առաքեալին հոգեգալստեան տօնին առթիւ արտասանած ճառը, ուր Պետրոս առաքեալ վկայակոչելով Յին Ուխտի մարգարէներուն Քրիստոսի մասին այն վկայութիւնը թէ Քրիստոսով մեղքերու քաւութիւն կը տրուի եւ հաւատացողներ, կ'արժանանան որդեգրութեան շնորհքին, կը պատգամէ. «Բոլոր մարգարէները Անոր (Քրիստոսի), մասին կը վկայեն, թէ Անոր հաւատացողները իրենց մեղքերուն թողութիւն պիտի ստանան Անոր անունով» (Գործք Առաքելոց 10:43, 13:38-39): Իսկ Պօղոս առաքեալ Յռոմայեցիներուն ուղղած իր նամակին մէջ այս մասին անդրադառնալով կ'աւելցնէ. **«Որովհետեւ դուք Աստուծոյ Յոգին ստացաք՝ ո՛չ թէ ծառայ դառնալու եւ դարձեալ վախով ապրելու համար, այլ Յոգին ստացաք՝ Աստուծոյ որդիները ըլլալու համար»** (Յռոմայեցիս 8:16):

Ըստ Աւետարանին եւ առաքելական թուղթերուն, Քրիստոսի աստուածութիւնը դաւանողներ եւ հոգեւոր վերանորոգ աստուածասեր կեանք ապրողներ՝ մահէն եւ աշխարհիկ մեղսալից կեանքէն հրաշակերպ փոխակերպուելով, աստուածահաճոյ սիրոյ կեանքի մը կը բացուին ու գործնապէս կ'ապրին սիրոյ, հեզութեան եւ բարութեամբ ճառագայթուն, աղօթանուէր ու մաքրակենցաղ սուրբ կեանք: Այս մասին Պօղոս առաքեալի թուղթերուն մէջ կը կարդանք. **«Եղբայրներ՝, մի՛ զարմանաք երբ աշխարհը ձեզ ատէ: Մենք գիտենք՝ թէ մահէն կեանքի անցած ենք»:** (Ա. Յովհաննէս 3:13-14): **«Սիրելիներ՝, սիրե՛նք իրար, որովհետեւ սերը Աստուծոյ պարգէնն է. ուստի ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է եւ զԱստուած կը ճանչնայ: Իսկ ով որ չի սիրեր՝ զԱստուած չի ճանչնար, որովհետեւ Աստուած սեր է: Աստուծոյ սերը հետեւեալ ձեւով մեզի յայտնուեցաւ.- Աստուած իր միածին Որդին դրկեց աշխարհ, որպէսզի Անով կեանք ունենանք: Այս է ճշմարիտ սերը. ո՛չ թէ մենք սիրեցինք զԱստուած, այլ Աստուած ինք սիրեց մեզ եւ իր Որդին դրկեց մեր մեղքերը քաւող իբրեւ Չոհ: Սիրելիներ, եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ, ապա ուրեմն մե՛նք եւս պետք է իրար սիրենք»** (Ա. Յովհաննէս 4:7-11):

Ապա առաքեալը կ'աւելցնէ. **«Եւ մենք տեսանք ու կը վկայենք, թէ Յայրը իր Որդին դրկեց, որպէսզի անկա աշխարհի Փրկիչը ըլլայ: Ով որ կը դաւանի թէ Յիսուս Աստուծոյ Որդին է՝ Աստուծոյ միացած կը մնայ եւ Աստուած ալ՝ անոր»** (Ա. Յովհաննէս 4:14-15):

Յետեւաբար՝ փրկուելու երաշխիքը այն է, որ հաւատացեալը նախ պետք է հաւատայ Յիսուսի եւ ձերբազատուի Օրէնքի լուծէն եւ կաշկանդումներէն: **«Մեր մեղքերը ի՛նք կրեց՝ իր մարմինով՝ խաչին վրայ, որպէսզի մեղքի տիրապետութենէն ազատած՝ արդարութեան համար ապրինք: Անոր վերջերովն էր որ բժշկուեցանք՝»** (Ա. Պետրոս 2: 24, Եսայի 53:6):

բ.-Յաւատացեալը պետք է հաւատայ որ Ան (Յիսուս), յանձն առաւ աշխարհի մարդոց մեղքը իր վրայ առնել եւ խաչին մահով, մեզ մեր

մեղքերէն սրբել ու իր յարութեամբ՝ մեզի անմահութիւն պարգեւել: **«Իմացէ՛ք եղբայրներ, Յիսուսի միջոցաւ մեղքերու թողութիւն կը քարոզուի ձեզի: Ով որ Անոր հաւատայ՝ կ'արդարանայ իր բոլոր մեղքերէն, որոնցմէ չկրցաք արդարանալ Սովսեսի Օրէնքին միջոցաւ»** (Գործք Առաքելոց 13:38-40):

«Քրիստոս Օրէնքի այդ անձօքէն մեզ ազատեց, ինք մեր տեղը անձօքի առարկայ դառնալով. որովհետեւ Օրէնքի գիրքին մէջ գրուած է. 'Անիծեալ է ան՝ որ փայտէ կը կախուի'» (Գաղատացիս 3:13):

գ.- Հաւատացեալը պէտք է ընդունի Յիսուսը որպէս Փրկիչ, որ յանձն առաւ զոհուիլ խաչին անարգ մահով, մեզ փրկելու եւ յաւիտենական կեանք պղարգեւելու համար: Ան է մեր Աստուածը, Օծեալ Թագաւորը, Քահանայապետը եւ աշխարհի Փրկիչը:

դ.- Հաւատացեալը պէտք է Անոր (Յիսուսի), յանձնուի ամբողջական յանձնառութեամբ: Իր երկրաւոր, ժամանակաւոր կեանքը ապրի զինք հաճեցնելու, իր կամքը կատարելու ամէն օր ու ամէն բանի մէջ: **«Միթէ մարդի՞կ հաւանութիւն պիտի տան իմ քարոզած Աւետարանիս համար, թէ Աստուած: Միթէ ես մարդիկը սիրաշահելու համար՞ կ'աշխատիմ: Եթէ մարդիկը սիրաշահելու ետեւէ ըլլայի՝ Քրիստոսի ծառայ ըլլալէ կը դադրէի»** (Գաղատացիս 1:10):

«Եթէ բերանովդ խոստովանիս թէ Յիսուս Տէր է, եւ սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զինք մեռելներէն յարուցանեց՝ կը փրկուիս: Այսինքն, ոեւէ մէկը որ իր սրտին մէջ կը հաւատայ՝ կ'արդարանայ, եւ երբ բերանով խոստովանի՝ կը փրկուի» (Հռոմեացիս 10:9-10):

ե.-Քրիստոսը դարձնել կատարելութեան ու մեր կեանքի օրինակը: **«Ով որ կ'ըսէ թէ Քրիստոսի միացած կը մնայ, պէտք է ապրի այնպէս՝ ինչպէս Քրիստոս ինք ապրեցաւ»** (Ա. Յովհաննէս 2:6):

Կարելի է եւ օգտակար, աստուածաշնչական այլ համարներ եւս մէջբերել, ուր հաւատացեալը կրնայ գիտնալ, վստահութիւն ու երաշխիք ունենալ, թէ Քրիստոսով փրկութիւնը կարելի է բոլոր անոնց համար, որոնք կը հաւատան, կ'ընդունին, կը դաւանին եւ կը վկայեն թէ Յիսուս Քրիստոս Օծեալ Տէրն է ու Աստուծոյ խոստացած աշխարհի Փրկիչը (Բ. Տիմոթէոս 1:12,4:7-8, Տիտոս 3:5, Եփեսացիս 2:5-6,1:7, Կողոսացիս 1:14, Ա. Պետրոս 1:18-19, Հռոմեացիս 8:2, Ա. Տիմոթէոս 1:15, Բ. Կորնթացիս 1:10):

ՀԱԿՈՏՆԵԱՅ ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջին ծնունդով ժառանգած ենք մարմնական, մեղանչական բնութիւն: Իսկ երկրորդ, հոգեւոր ծնունդով՝ (մկրտութեամբ), կը ստանանք նոր, բարի բնութիւն: Մարմնով ստեղծուած ըլլալով՝ բնութեան տիրապետութեան ենթակայ ենք. ֆիզիքական յոռի ցանկութեանց ենթակայ մարդ արարածը տկար է ու անզօր դիմադրելու մարմնական թէ այլ մղումներու, ձգտումներու, հետեւաբար չար է: Նոյնիսկ եթէ զանազան ձիրքերով, կարողութիւններով ալ օժտուած ըլլայ, զարգացած, բարեկիրթ,

վեհանձն, կրօնասէր, պարկեխտ, ուղղամիտ, աշխատասէր, ճշմարտախօս ու այլ բարեմասնութիւններ ալ եթէ ունենայ, բայց վերստին ծնած չըլլայ, այսինքն՝ չապաշխարէ եւ Քրիստոս չընդունի, չի՛ կրնար զԱստուած հաճեցնել, ճշմարիտ քրիստոնեայ ու փրկութեան երաշխիքը ունենալ: Կարդա՛ եւ տես Ծննդոցի 1:26-27, 3:12-13, 17:19-24 գլուխներու համարները եւ Հռոմեացիներու 5:12 համարները: Հոն իրազեկ կը դառնանք թէ ինչպէս մարդ Աստուծոյ պատկերին՝ Հոգիին նմանութեամբ, բանականութեամբ եւ ազատ կամքով ստեղծուեցաւ, սակայն մեղանչական բնութեան ենթակայ՝ պատուիրազանցութեամբ զրկուեցաւ աստուածային շնորհքէն ու ժառանգեց մահուան խայթոցը:

Մարդու մեղանչական բնութիւնը նաեւ տկար է ու դիւրաբեկ: Սաղմոսերգու Դաւիթ մարգարէ այսպէս կը բնորոշէ մարդկային տկար բնութիւնը երբ կը գրէ. «Նախքան երկրին ու տիեզերքին գոյութեան գալը, Դուն կաս ու կը մնաս, ո՞վ Աստուած: Մարդը հողին կը վերադարձնես, ըսելով.- Հողի՛ն դարձեք, ադամորդիներ... Եօթանասուն տարի է մեր կեանքին տեւողութիւնը, կամ թէ հազիւ ութսուն տարի. որ՝ լաւագոյն պարագային՝ չարչարանք է ու նեղութիւն: Կեանքը շուտով վերջ կը գտնէ, յաջորդ պահուն արդէն չկանք»: (Սաղմոս 90:2-3,10): Իսկ Եսայի մարգարէ մարդուն կեանքը խոտի կը նմանցնէ երբ կը գրէ. «Ամէն մարմին խոտ է. անոր ամբողջ վայելչութիւնը դաշտի ծաղիկին պէս է: Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի, երբ անոր վրայ Տիրոջ հովը փչէ: Իրապէս ժողովուրդը խոտ է. խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի բայց Աստուծոյ խօսքը յաւիտեան կը մնայ» (Եսայի 40:6-8):

Մարդու մեղանչական բնութիւնը նաեւ չար է: Սաղմոսերգու Դաւիթ դարձեալ կը յիշեցնէ սաղմոսելով. «Արդարեւ, անօրէն եմ ծնունդէս ի վեր, մեղաւոր եմ մօրս յղութեան պահէն սկսեալ» (Սաղմոս 51:5): Իսկ Մարկոս անետարանիչ արտայայտուելով այս մասին, կը մեջբերէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խօսքերը, որ կ'ուսուցանէ. «Ինչ որ մարդէն դուրս կ'ելլէ՝ ա՛յն է որ կը պղծէ մարդս: Որովհետեւ մարդուն ներսէն, այսինքն սիրտէն է որ կ'ելլեն չար մտածումները.- շնութիւն, պոռնկութիւն, գողութիւն, սպանութիւն, ազահութիւն, չարութիւն, նենգութիւն, գիշութիւն, չար նախանձ, հայիոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն» (Մարկոս 7:20-23): Պօղոս առաքեալ արծարծելով այս հարցը, կը յիշեցնէ եւ կը զգուշացնէ պատուիրելով.

«Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեկանը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ: Ահա թէ ինչու, անոնք որ մարմնականին կը հետեւին՝ Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ» (Հռոմայեցիս 8:6-8): Իսկ Եփեսացիներուն ուղղած իր նամակին մեջ առաքեալը կը պարզէ մարդ արարածի մեղանչական չար բնութիւնը զգուշացնելով հաւատացեալները. «Ժամանակ մը մենք բոլորս ալ նոյնպէս անհնազանդ էինք եւ մարդկային բնութեան յատուկ ցանկութիւններով կ'ապրէինք՝ մեր մարմինին ու մտքին բոլոր փափաքները կատարելով, եւ

իրապես Աստուծոյ պատիժին արժանի էինք, միւսներուին պես» (Եփեսացիս 2:3):

ԱՌԱՋԻՆ ԾՆՈՒՆԴՈՎ՝ ՀԻՆ ԲՆՈՒԹԵԱՄԲ ՆՈՐ ՄԱՐԴԸ

Քրիստոսով նոր մարդը թէեւ իր հին մեղանչական բնութիւնը ունի, սակայն ապաշխարութեամբ, մկրտութեամբ եւ Քրիստոսը դաւանելով՝ Աստուծոյ կ'որդեգրուի, այժմ ան արդարացած, նոր արարածի կը կերպարանափոխուի: Արտաքին ձեւափոխում չէ որ կը կատարուի, այլ՝ ներքին փոփոխութիւն: Թէեւ իր հին մեղանչական բնութիւնը կը մնայ, սակայն յաւիտենական բախում, պայքար տեղի կ'ունենայ անոնց միջեւ: Որովհետեւ մարմինը կը ցանկայ Յոգիին հակառակ, ու հոգին՝ մարմնին հակառակ: Հոգեւոր ծնունդի ինչպէս նաեւ հակոտնեայ երկու բնութիւններու մասին ւաւետարաններու մէջ կը կարդանք. «Յիսուս Նիկողեմոսի պատասխանեց. -Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը» (Յովհաննէս 3:3): Յովհաննէս ւաւետարանիչ խօսելով վերստին ծնունդի մասին, կը գրէ. «Իսկ զիսք (Յիսուսը) ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմնի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով» (Յովհաննէս 1:12-13): Իսկ Պօղոս առաքեալ նոյն մտածումներով կը խրախուսէ Եփեսացիները գրելով. «Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եղէք նոր մարդ մը՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած, եւ ապրեցէք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու սրբութեամբ» (Եփեսացիս 4:22): Պօղոս առաքեալ նոյն թելադրանքներով կը խրախուսէ Կորնթացիները գրելով. «Ոեւէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ: Եւ այս նորոգութիւնը կու գայ Աստուծմէ, որ Քրիստոսի միջոցաւ մեզ իրեն հետ հաշտեցուց» (Կորնթացիս 5:17-18): Քրիստոսով հոգեւոր ծնունդ ունենալու, վերանորոգուելու, նոր արարածի կերպարանափոխուելու մասին կը թելադրուի նաեւ կարդալ (Գաղատացիս 2:20, Կողոսացիս 1:27, 3:3-4, Փիլիպեցիս 1:21, Բ. Պետրոսի 1:4, Հռոմայեցիս 8:10, Ա. Յովհաննէս 5:11, Գաղատացիս 5:16-17, Հռոմայեցիս 7:14-25, 8:1-39) համարները:

Երկու (մարմնաւոր-հոգեւոր), բնութեանց միջեւ կռիւը ինչպէ՞ս տանելու է, կամ ի՞նչ են, հին մեղանչական բնութեան վրայ յաղթութիւն տանելու գաղտնիքը եւ միջոցները: Աստուածաշունչի պատգամ-ուսուցումը ու յատկապէս Պօղոս առաքեալի տեսակետը այս մասին յստակ է, երբ կը խրատէ Հռոմայեցիները գրելով. «Անոնք որոնք Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին Օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան

ենթակայութենէն...Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը դեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնք որ Յոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է: Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեկանը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ: Ահա թէ ինչու, անոնք որ մարմնականին կը հետեւին՝ Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ: Եթէ իրապէս Աստուծոյ Յոգին ձեր մէջ կը բնակի, կը նշանակէ՝ թէ դուք այլեւս մարմնական ցանկութիւններուն համաձայն չէք ապրիր, այլ՝ Ս. Յոգիին կամեցած ձեւով: Իսկ ով որ Զրիստոսի Յոգին չունի, անոր չի պատկանիր: Եթէ Զրիստոս ձեր մէջն է, թեպէտեւ ձեր մարմինները պիտի մեռնին, որովհետեւ մեղանչեցիք, սակայն Ս. Յոգին դարձեալ կեանք պիտի տայ ձեզի, որովհետեւ արդարացաք: Այսինքն, եթէ Աստուծոյ Յոգին ձեր մէջ կը բնակի, Աստուած, որ Յիսուս Զրիստոսը մեռելներէն յարուցանեց, իր Յոգիին միջոցաւ որ ձեր մէջ կը բնակի՝ պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու մարմինները: Յետեւաբար, եղբայրներ՝, պետք չէ՛ ապրինք մեր մարմինին համար եւ մարմնաւորապէս: Որովհետեւ եթէ մարմնաւորապէս ապրիք՝ պիտի մեռնիք. իսկ եթէ Յոգիին օգնութեամբ ձեր մեղքերը սպաննէք՝ պիտի ապրիք: Աստուծոյ որդիները անոնք են՝ որոնք Աստուծոյ Յոգիով կ'առաջնորդուին» (Հռոմայեցիս 8: 2-14):

Հակադիր Բնութեանց Յաղթելու
Աւետարանական Չորս Միջոցներ

Ադամական մեղքով ծնած մարդը, մեղանչական իր բնութիւնը ապաշխա-րութեամբ, մկրտութեամբ եւ Զրիստոսը դաւանելով՝ երբ Աստուծոյ կ'որդեգրուի, կ'արդարանայ, հոգեւոր նոր ծնունդ կ'ունենայ, նոր արարածի կը կերպարանափոխուի, սակայն իր հին մեղանչական մարդկային բնութիւնը վերջնականապէս չ'անհետանար, այլ մինչեւ մահ, յաւիտենական բախում, պայքար տեղի կ'ունենայ անոնց միջեւ: Ըստ Աստուածաշունչին, մարդուն հողանիւթեայ մարմինը կը ցանկայ Յոգիին հակառակ, ու հոգին՝ մարմնին հակառակ: Թեւ Աստուծոյ պատկերին՝ Յոգիին նմանութեամբ ստեղծուած էր մարդը եւ օժտուած բանականութեամբ եւ ազատ կամքով, սակայն մեղանչական բնութեան ենթակայ ըլլալով՝ պատուիրազանց եղաւ, գրկուեցաւ աստուածային շնորհքէն ու ժառանգեց մահուան խայթոցը:

Երկեակ (մարմնաւոր-հոգեւոր), բնութեանց միջեւ կռիւը ինչպէ՞ս տանելու է, կամ ի՞նչ են, ադամական, մեղանչական բնութեան վրայ յաղթութիւն տանելու գաղտնիքը եւ միջոցները: Աստուածաշունչի պատգամ-ուսուցումը ու յատկապէս Պօղոս առաքեալի տեսակետը այս մասին յստակ է, երբ կը խրատէ Հռոմայեցիները գրելով. «**Անոնք որոնք Զրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւորապէս: Որովհետեւ Յոգիին**

Օրերը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն:...Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը դեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնք որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է» (Հռոմայեցիս 8:2-6):

Աստուածաշունչը մարդկային մեղանչական բնութեան յաղթելու չորս գաղտնիք կը բացայայտէ կամ չորս միջոցներ կ'առաջադրէ.-

ա.- Առաջին հերթին, պէտք է համոզուիլ, որ որպէս մարդ արարած, այնքան ատեն որ կ'ապրինք, մեր հին մեղանչական բնութենէն բնաւ պիտի չձերբագատուինք, այլ զայն պիտի կրենք մինչեւ մահ: Հետեւաբար հոգիի եւ մարմնի միջեւ պայքարը միշտ պիտի շարունակուի:

բ.- Գիտնալով եւ ընդունելով մարդկային մեր մեղանչական տկար բնութիւնը, հնարաւորինս պէտք չէ տեղի տալ մարմնի ցանկութիւններուն: Չանք թափելու ենք մեղանչական մեր մարմնին ձգտումները զսպելու, չաճեցնելու, յագուրդ չտալու յոռի մղումներուն. որովհետեւ կարելի չէ վստահիլ մեր մարմնի բնութեան: Պէտք չէ վառելանիւթ հայթայթել մարմնական ցանկութիւններուն: Պօղոս առաքեալ թելադրութիւնն է Հռոմայեցիներու ուղղած իր նամակով, նոյն այս թելադրութեամբ կը զգուշացնէ հաւատացեալները գրելով. **«Տեր Յիսուս Քրիստոսի նկարագիրը ձեր վրայ առէք, եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք»** (Հռոմայեցիս 13:14):

գ.- Ընդհակառակը, պէտք է միշտ սնունդ հայթայթել, աճեցնել մեր «նոր բնութիւնը», նման նորածին մանկան, հաւատացեալը պէտք է սնուցուի Աստուծոյ խօսքին անխարթախ կաթով: Միաժամանակ պէտք չէ մտահան ընել, որ հակառակ մեր նոր բնութեան եւ որդեգրութեան շնորհքին արժանանալուն՝ մեր հին բնութիւնը կրնայ միայն տկարացած ըլլալ, բայց ոչ մեռած, առիթի եւ մեր տկար պահուն դարանակալ կը սպասէ: Նաեւ գիտնալու ենք, որ կարելի չէ երկու բնութիւններն ալ միաժամանակ սնուցանել, այսինքն՝ Աստուծոյ խօսքը կարդալ, բայց միւս կողմէ Աստուծոյ ո՛չ հաճելի վայրեր յաճախել, կամ արարքներ կատարել: Այս նպատակաւ, Պետրոս առաքեալ կը յորդորէ հաւատացեալները եւ կը զգուշացնէ գրելով. **«Մէկդի՛ ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքին անխարթախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք»** (Ա Պետրոս 2:1-2):

Հաւատացեալը ու ճշմարիտ քրիստոնեան, մարմնի ցանկութիւններուն եւ աշխարհի հաճոյքներուն նկատմամբ պէտք է խուլ, կոյր, համր, այլաբանօրէն «անդամահատուած» պէտք է ըլլայ: Չսպէ ներքին չար մղումները, անտարբեր ըլլայ աշխարհային հաճոյքներու նկատմամբ. հեռու կենայ հոգին խաթարող մոլորութիւններէն, վատ սովորութիւններէն եւ ապրելակերպէ: Պօղոս առաքեալ այս մասին անդրադառնալով կը զգուշացնէ Գաղատացիները գրելով. **«Սուրբ Հոգիով առաջնորդուեցէք,**

փոխանակ մեղանչական բնութեան յատուկ ցանկութիւնները կատարելու: Որովհետեւ մեղանչական բնութիւնը Սուրբ Յոգիին ցանկացածին հակառակն է որ կը ցանկայ, իսկ Սուրբ Յոգին՝ մեղանչական բնութեան ցանկացածին հակառակը» (Գաղատացիս 5:16-176): Մեր Տէրը Յիսուս, այս մասին անդրադառնալով այլաբանօրէն կը թելադրէ. «**Եթէ ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցնէ՝ կտրէ ու նետո՛ւ՝ զայն, որովհետեւ ավելի լաւ է մէկ ձեռքով կամ կող մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք եւ երկու ոտք ունենալ եւ իյնալ յաւիտենական կրակին մէջ: Եւ եթէ աչքդ քեզ կը գայթակղեցնէ՝ հանէ եւ նետո՛ւ՝ զայն. ավելի լաւ է միականի մտնել կեանք, քան թէ երկու աչք ունենալ եւ իյնալ դժոխքի կրակին մէջ» (Մատթէոս 18:8-9):**

Հաւատացեալը գիտնալու եւ ճիգ թափելու է զսպելու ինքզինք, նուաճելու է մարմնական մոլութիւններն ու ցանկութիւնները, տարուելու չէ աշխարհիկ հաճոյամոլ հրապոյրներէն: Այլ խօսքով, աշխարհի մէջ ապրելով հանդերձ, ճշմարիտ հաւատացեալը վեր եւ հեռու կենալու է աշխարհիկ մոլորեցուցիչ ցանկութիւններէն, ապրելու եւ գործելու է այնպէս, որպէս աչք, ոտք եւ ձեռք չունենայ: Այլ խօսքով, հաւատացեալը ապրելու է աստուածահաճոյ, առաքինի կեանք եւ ո՛չ թէ մարդոց ու աշխարհին հաճելի կենցաղ: Պօղոս առաքեալ կը խրախուսէ մեզ թելադրելով. «**Մեռցուցէ՛ք ձեր մէջ երկրաւոր ցանկութիւնները, այսինքն՝ ձեզմէ դուրս վանեցէք պռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահութիւնը, ինչ որ կռապաշտութիւն է. որովհետեւ այդ բոլորը Աստուծոյ անհնազանդ մարդոց գործերն են, եւ Աստուած պիտի պատժէ զանոնք: Նախապէս դո՛ւք ալ այդ բոլորը կ'ընէիք, երբ տակաւին այդ ցանկութիւններով կ'ապրէիք: Բայց հիմա ձեզմէ դուրս նետեցէք այդ բոլորը.- բարկութիւնը, զայրոյթը եւ չարութիւնը: Ձեր բերանէն ուեւ հայիոյութիւն կամ լկտի խօսք չլսուի: Սուտ մի՛ խօսիք իրարու: Մոռցէ՛ք ձեր եր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զինք ճանչնալ» (Կողոսացիս 3:5-10): Նմանապէս առաքեալը Հռոմայեցիներուն ուղղած նամակով յիշելով այս բոլորը կը զգուշացնէ. «**Եթէ մարմնաւորապէս ապրիք՝ պիտի մեռնիք. իսկ եթէ Հոգիին օգնութեամբ օգնութեամբ ձեր մեղքերը սպաննէք՝ պիտի ապրիք» (Հռոմայեցիս 8:13):** Հետեւաբար, քրիստոնեան եւ քրիստոսով վերանորոգուած, նոր հոգի զգեցած մարդը, սպաննելու է մեղքի ամէն խայթոց ու առիթ, հեռանալու եւ վանելու է մեղքի պատճառ եղող ամէն տեսակի մոլութիւնէ, ձգտումներէ ու փափաքներէ: Այս կարելի է միայն Աստուծոյ օգնութեամբ, Աստուծոյ յանձնուելով: «**Այսուհետեւ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմիններուն մէջ, զանոնք իր ցանկութեանց հնազանդեցնելով: Մեղքին անձնատուր մի՛ ըլլաք, ձեր անդամները անիրաւութեան գործիք դարձնելով, այլ՝ որպէս մահուրնէ կեանքի եկած մարդիկ՝ դուք ձեզ Աստուծոյ յանձնեցէք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք: Մեղքը ձեր վրայ պէտք չէ իշխէ, քանի դուք Օրէնքին ենթակայ չէք, այլ՝ շնորհքին» (Հռոմայեցիս 6:12-14):****

դ.- Աստուծոյ Որդւոյն Յիսուս Զրիստոսի հաւատացողներ եւ որպէս Օծեալ Տէր եւ Փրկիչ դաւանողներ, վերանորոգ քրիստոնեական կեանքի հրաւիրեալներ, պէտք է գիտնան սահմանափակել աշխարհիկ անհմաստ զբաղումները, ընկերային թէ ընտանեկան աւելորդ մտահոգութիւնները: Աշխարհիկ հոգսերով, գործերով պէտք չէ ծանրաբեռնել մեր կեանքը, որոնք կրնան արգելք, պատնէշ հանդիսանալ մեր հոգեւոր աճումին: Պօղոս առաքեալ հաւատացեալներուն հոգեւոր աճման սատարելու համար կը թելադրէ. **«Վանէ՛նք ամեն խոչընդոտ եւ մէկ կողմ ձգենք մեղքը, որ մեզ դիրաւ կը պաշարէ, եւ համբերատարութեամբ պայքարինք մեզի ներկայացող փորձութիւններուն դէմ: Մեր աչքերը յառենք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին, որ գիտնալով թէ ի՛նչ ուրախութիւն կը սպասէ իրեն՝ արհամարհեց ամօթը, յանձն առաւ խաչի վրայ մեռնիլ, եւ Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ»** (Եբրայեցիս 12:1-2): Զոս խոչընդոտ, աշխարհիկ մտահոգութիւն, զբաղում, ծանրաբեռնուածութիւն ըսելով կը հասկնանք չափազանց զբաղած ըլլալ, շատ ժամանակ յատկացնել ընտանեկան, ընկերային կամբարեսիրական բարեգործական աշխատանք-ներով, որոնք ինքնին մեղք չեն, սակայն **«ծանրութիւններ»**, **«արգելքներ»**, **«խոչընդոտներ»** են, որոնք կը դանդաղեցնեն, կը կասեցնեն հոգեւոր կեանքի մեր աճը, զարգացումը, վերթելում սլացքը նուիրումը եւ ամբողջական յանձնառութիւնը:

Փրկութիւն եւ Վարձք

I. Փրկութիւնը ձրի պարգեւ մըն է: Աւետարանները խօսելով փրկութեան արժանանալու միջոցներու մասին, կը պատգամեն. «Դուք Աստուծոյ շնորհքովը փրկուեցաք, քանի հաւատացիք: Փրկութիւնը ձեր արժանիքը չէ, այլ՝ Աստուծոյ պարգեւն է: Ձեր գործերով շահուած չէ անիկա, որպէսզի ուրիշ մէկը չպարծենայ» (Եփեսացիս 2:8-9): Պօղոս առաքեալ հռոմայեցիներուն ուղղած իր նամակով, այս մասին անդրադառնալով կը խրախուսէ հաւատացեալները յիշեցնելով. «Գիտենք որ մեղքին հետեւանքը մահ է. բայց հիմա մեղքին տիրապետութենէն ազատ էք եւ Աստուծոյ ծառաներն էք: Ձեր շահը սրբութեան նուիրումով կեանք մըն է, որուն արդիւնքը պիտի ըլլայ յաւիտենական կեանքը: Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաւիտենական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի մոռոցաւ» (Յռոմայեցիս 6:22-23):

II. Փրկութիւնը եւ յաւիտենական կեանքի վարձատրութիւնը կը շահուի գործերով: Արդարեւ քրիստոնեան ոչ միայն հաւատքով կ'արժանանայ փրկութեան, այլեւ՝ բարի գործերով: Զաւատք եւ գործ միասին կ'ընթանան, զիրար կ'ամբողջացնեն: Գիտեն ժամանակը եւ իրենց ընձեռուած պատեհութիւնները արդիւնաւորել, բարին իրագործել: Աւետարանի ուսուցումները յստակ կը բնորոշեն այս իրողութիւնը յայտարարելով. «Եւ ով

որ այս փոքրիկներեն մեկուն նոյնիսկ գաւաթ մը պաղ ջուր կու տայ խմելու՝ իմ աշակերտս ըլլալուն համար, վստահ եղէք որ իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ» (Մատթէոս 10:42): «Տէրը ըսաւ. Ապրի՛ս, բարի՛ ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզի տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ» (Ղուկաս 19:17): «Բարի պատերազմը մղեցի, կեանքիս ընթացքը աւարտեցի, հաւատքը պահեցի: Ասկէ ետք ինծի կը մնայ միայն սպասել արդարութեան պսակին, որ Տէրը, արդար Դատաւորը, իբրեւ հատուցում՝ ինծի պիտի տայ դատաստանի օրը: Եւ պիտի տայ ո՛չ միայն ինծի, այլ նաեւ բոլոր անոնց՝ որոնք սիրով կը սպասեն Տիրոջ յայտնուելուն (Բ. Տիմոթէոս 4:7-8):

«Մրցադաշտին վրայ վազքի մասնակցողներուն օրինակը գիտէք, չէ՞: Վազելը՝ բոլորն ալ կը վազեն, բայց մրցանակը մէկ հոգի կը շահի: Դուք ալ, այնպէս վազեցէք՝ որ մրցանակին հասնիք: Մարզիկները իրենք զիրենք խիստ կանոններու կ'ենթարկեն՝ վաղանցուկ դափնեպսակ մը առնելու համար. իսկ մենք նոյնը կ'ընենք՝ յաւերժական դափնեպսակին համար»: «Իւրաքանչիւրը իր աշխատանքին համաձայն իր վարձատրութիւնը պիտի ստանայ... Ամէն ոք զգուշ պետք է ըլլայ, թէ ի՛նչպէս կը շինէ: Որովհետեւ ոեւէ մէկը չի կրնար ուրիշ հիմ դնել, քան Աստուծոյ դրած միակ հիմը, որ Յիսուս Զրիստոս է: Այդ հիմին վրայ շինուածը կրնայ ոսկի, արծաթ կամ թանկագին քար ըլլալ, եւ կամ կրնայ փայտ, խոտ կամ եղէգ ըլլալ: Իւրաքանչիւրին գործը դատաստանի օրը պիտի յայտնուի, եւ ատիկա կրակը պիտի յայտնէ, որովհետեւ իւրաքանչիւրին գործին որակը կրակով պիտի փորձուի: Եթէ մեկուն շինածը կրակին դիմանայ՝ ենթական պիտի վարձատրուի. իսկ եթէ այրի՝ ենթական պիտի տուժէ, այսինքն թէեւ անձը ինք պիտի փրկուի, սակայն իր գործերուն համար վարձատրութիւն պիտի չստանայ» (Ա. Կորնթացիս 9:24-25, 3:8, 10, 11-15):

Նոր Կտակարանին մէջ հինգ տեսակ **«վարձք»** կամ **«պսակ»**ներ յիշատակուած են, որոնք Աստուծոյ հաւատարիմ սուրբերուն պիտի տրուին իբրեւ վարձատրութիւն:

ա.- Ուրախութեան պսակ: Պիտի տրուի Աստուծոյ խօսքին քարոզութեամբ հոգիներ շահողներուն-վաստկողներուն: Պօղոս առաքեալի խօսքերը կը յուսադրեն հաւատացեալները որպէսզի ամուր կառչին իրենց հաւատքին եւ Աւետարանի ուսուցումներուն. «Արդարեւ, երբ մեր Տէրը Յիսուս Զրիստոս գայ, իր առջեւ ո՞վ պիտի ըլլայ մեր յոյսը կամ ուրախութիւնը, կամ յաղթանակի պսակը՝ որով կրնանք պարծիլ, եթէ ոչ՝ դուք: Այո՛ դուք էք մեր փառքը եւ ուրախութիւնը»:

«Ուստի, սիրելի եւ կարօտալի եղբայրներ, դուք՝ որ իմ ուրախութիւնս էք եւ պսակս, այսպէս ամփոթէն Տիրոջ միացած մնացէք, սիրելիներ՛ր» (Ա. Թեսաղոնիկեցիս 2:19-20, Փիլիպպեցիս 4:1):

բ.- Արդարութեան պսակ: Պիտի տրուի անոնց որոնք կ'ապրին արդար եւ երկիւղած ապաշխար կեանք: Եւ այդ կը վկայեն իրենց բարի վարմունքով:

«Ասկէ ետք ինծի կը մնայ միայն սպասել արդարութեան պսակին, որ Տէրը, արդար Դատաւորը, իբրեւ հատուցում՝ ինծի պիտի տայ դատաստանի օրը (Բ. Տիմոթէոս 4:8):

գ.- Կենաց պսակ: Պիտի տրուի անոնց որոնք նեղութեանց եւ հալածանքներու կը համբերեն եւ մինչեւ վերջ հաւատարիմ կը մնան:

«Երանի՛ այն մարդուն որ կը տոկայ փորձութեան, որովհետեւ փորձութենէն յաղթական դուրս եկողը որպէս մրցանակ պիտի ստանայ այն կեանքը, որ Տէրը խոստացաւ տալ զինք սիրողներուն»:

«Մի՛ վախնար այն չարչարանքներուն համար, որ պիտի կրես: Ահա Բանսարկուն ձեզմէ ոմանք բանտ պիտի նետէ՝ ձեզ փորձելու համար... Զաւատարիմ եղիր ինծի, նոյնիսկ եթէ մեռնիլ պետք է, եւ ես քեզի կեանքի պսակը պիտի տամ» (Յակոբոս 1:12, Յայտն. 2:10):

դ.- Փառաց պսակ: Պիտի տրուի անոնց որոնք որպէս քաջ հովիւ կը հսկեն Աստուծոյ զաւակներուն վրայ:

«Երեցներ, ձեզի վստահուած Աստուծոյ հօտը արածեցէք ո՛չ թէ ձեզի վստահուած մարդոց պարտադրելով ձեր անձերը, այլ՝ օրինակ ըլլալով ձեր հօտին, որպէսզի երբ Զովուապետը յայտնուի՝ անթառամ փառքի պսակը ընդունիք»:

Այստեղ կը տրուի Յիսուսի օրինակը որպէս անձնագոհ Զովիւ, որ իր կեանքը զոհաբերեց մարդոց փրկութիւնը երաշխաւորելու: «Փառքով ու պատուով պսակուած կը տեսնենք Յիսուսը, որ «հրեշտակներէն քիչ մը վար» դասուեցաւ՝ մահուան չարչարանքը յանձն առնելու համար, որպէսզի Աստուծոյ շնորհքով բոլոր մարդոց փոխարէն մահը ճաշակէ: Որովհետեւ Աստուած, որ իրեն համար ստեղծեց եւ իրմով կը պահէ ամէն ինչ, իր բոլոր որդիները մասնակից դարձնելու համար իր փառքին՝ յարմար գտաւ, որ զանոնք փրկութեան առաջնորդող՝ Յիսուս ի՛նք օրինակը տայ չարչարանքներէն անցնելով կատարելութեան հասնելու» (Ա. Պետրոս 5:2,3-4, Եբրայեցիս 2:9-10):

ե.- Անեղծանելի պսակ: Այս պիտի տրուի անոնց որոնք ամէն բանի մէջ չափաւորութիւն եւ հաւասարակշռութիւն կը պահեն:

III. Փրկութիւնը ներկայի հոգեվիճակ է: Զաւատացեալը վստահութիւնը եւ ապահովութիւնը պետք է ունենայ որ ինք փրկուածներու դասին մաս կը կազմէ:

«Ով որ հաւատայ Որդիին՝ յաւիտենական կեանքը կ'ունենայ, իսկ ան որ չի հնազանդիր Որդիին՝ կեանք պիտի չունենայ, այլ՝ Աստուծոյ պատիժը պիտի գայ անոր վրայ»: «Ան՝ (Աստուած), որ մեզ փրկեց եւ իր սուրբ ժողովուրդը ըլլալու հրաւիրեց մեզ, ո՛չ թէ մեր արժանիքներուն համար, այլ՝ իր ծրագրին համաձայն եւ այն շնորհքին՝ որ մեզի տրուած էր Քրիստոս Յիսուսի միջոցաւ, յաւիտենական ժամանակներէն իսկ առաջ»: «Մեզի տրուած վկայութիւնը սա է, թէ Աստուած յաւիտենական կեանք տուաւ մեզի, եւ այդ կեանքին աղբիւրը Որդին ինքն է»:

«Լաւ գիտցէք, ով որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր՝ որ զիս դրկէց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է»:

«Կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ինծի հաւատայ՝ յաւիտենական կեանք ունի»:

«Աստուած մեզ փրկէց, ո՛չ թէ մեր կատարած արդար գործերուն համար, այլ՝ պարզապէս ողորմած ըլլալուն համար: Մեզի նոր ծնունդ տուաւ մկրտութեամբ եւ Սուրբ Հոգիին միջոցաւ մեզ վերանորոգեց»(Յովհաննէս 3:36, Բ. Տիմ. 1:9, Ա. Յովհ. 5:11, Յովհ. 5:24, 6: 47, Ղուկ. 7:50, Տիտոս 3:5):

IV. Վարձատրութիւնը ապագային ստանալիք վիճակ է: Վարձատրութիւնը պիտի տրուի Զրիստոսի Երկրորդ Գալստեան ժամանակ բոլոր անոնց, որոնք պիտի արդարանան Աստուծոյ Դատաստանին եւ ստանան համապատասխան վարձատրութիւն՝ յաւիտենական երանական կեանք:

«Արդարեւ, Մարդու Որդին պիտի գայ իր Հօր փառքով՝ իր հրեշտակներուն հետ, եւ այն ատեն իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ» (Մատթէոս 16:27):

«Այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ» (Ղուկաս 14:14):

«Ասկէ ետք ինծի կը մնայ միայն սպասել արդարութեան պսակին, որ Տէրը, արդար Դատաւորը, իբրեւ հատուցում՝ ինծի պիտի տայ դատաստանի օրը: Եւ պիտի տայ ո՛չ միայն ինծի, այլ նաեւ բոլոր անոնց՝ որոնք սիրով կը սպասեն Տիրոջ յայտնուելուն» (Բ. Տիմ. 4:8):

Զրիստոս իրեն հաւատարիմներուն, հաւատքը անխախտ պահողներուն, երկնային ու յաւիտենական փառքը խոստացաւ, միաժամանակ զանոնք երկրա-յին, աշխարհի հալածանքներէն, փորձանքներէն ազատելու, պահպանելու եւ պաշտպանելու երաշխիքը տուաւ. բայց մանաւանդ սրտապնդեց ու քաջալերեց, որ իրեն հետեւորդ քրիստոնէաներ, ճշմարիտ աստուածպաշտութեամբ հետամուտ ըլլան քրիստոնէական առաքիլութիւններու: Արդարեւ Աստուծոյ խօսքը կը վստահեցնէ յայտարարելով. «Ահա շուտով կու գամ. ամո՛ւր պահէ ինչ որ ունիս, որպէսզի ոեւէ մէկը ձեռքէդ չառնէ յաղթանակի պսակը» (Յայտնութիւն 3:11):

«Իր հաւատքով էր որ Աբրահամ հնազանդեցաւ Աստուծոյ կոչին, որ ելլէ երթայ այն տեղը՝ որ իբրեւ ժառանգութիւն պիտի ստանար. եւ ճամբայ ելաւ, առանց գիտնալու թէ ո՛ւր կ'երթայ: Հաւատքով էր որ պանդուխտի պէս ապրեցաւ այն օտար երկրին մէջ, որ Աստուած խոստումով իրեն տուած էր, եւ վրաններու տակ բնակեցաւ Իսահակի եւ Յակոբի հետ միասին, որոնք նոյն խոստացուած երկրին ժառանգորդներն էին: Որովհետեւ ինք կը սպասէր այն միւս մնայուն քաղաքին, որուն ճարտարապետն ու շինողը Աստուած է» (Եբրայեցիս 11:8-10):

«Երանի՛ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը: Երանի՛ ձեզի, երբ մարդիկ

նախատեն եւ հալածեն ձեզ, կամ ստելով՝ ձեր մասին ամեն տեսակի զրպարտութիւն ընեն իմ հետեւորդներս ըլլալնուդ համար: Տնծացեք եւ ուրախացեք, որովհետեւ ձեր վարձատրութիւնը մեծ է երկինքի մէջ» (Մատթէոս 5:10-12):

«Երանելի են այն ծառաները, որոնց տերը զիրենք արթուն կը գտնէ, երբ կես գիշերին կամ աւելի ուշ տուն դառնայ: Բայց այս ալ գիտցեք, որ եթէ տանտերը գիտնար թէ գողը ո՞ր ժամուն պիտի գայ, արթուն կը մնար եւ թոյլ չէր տար որ գողը պատը քանդելով տունը մտնէ: Ուրեմն, դուք ալ պատրաստ եղէք, որովհետեւ Մարդու Որդին ձեր չակնկալած ժամուն կրնայ գալ» (Ղուկաս 12:38-40):

«Մեր աչքերը յառենք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին, որ գիտնալով թէ ի՞նչ ուրախութիւն կը սպասէ իրեն՝ արհամարհեց ամօթը, յանձն առաւ խաչի վրայ մեռնիլ, եւ Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ: Որպէսզի երբեք չյուսալքուիք եւ չտկարանաք, մտաբերեցեք՝ թէ Յիսուս ի՞նչպիսի համբերութեամբ կրեց մեղաւորներու հակառակութիւնները» (Եբրայեցիս 12:2-3):

«Աստուած անարդար չէ. չի մոռնար ձեր փրկութեան առաջնորդող գործերը եւ այն սերը՝ որ իր անունով ցուցաբերեցիք՝ ձեր քրիստոնէայ եղբայրներուն օգտակար ըլլալով, ինչպէս կը շարունակէք մինչեւ հիմա» (Եբրայեցիս 6:10):

Օրէնք եւ Շնորհք

– «Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Բրիստոսի միջոցաւ» (Յովհաննէս 1:17): Հին Ուխտի Ելից անտարանի 20:1-էն սկսեալ մինչեւ Մաղաքիա Մարգարէ, փրկութեան երաշխիք՝ Օրէնքն էր տիրապետողը եւ կը կազմեր կրօնական հոգեւոր կեանքի կեդրոնական առանցքը: Իսկ Նոր Ուխտի անտարաններէն մինչեւ Յայտնութեան գիրք՝ առաւել ուժգնութեամբ շեշտուեցաւ Շնորհքը: Այս ըսելով չենք հաստատեր, որ Մովսէսէն առաջ օրէնք չկար: Ոչ ալ Յիսուս Բրիստոսէ առաջ Շնորհք եւ ճշմարտութիւն չկային: Օրէնք, Շնորհք եւ ճշմարտութիւն կային:

Երբ Աստուած Ադամ-Եւային արգիլեց ուտել այն Ծառի պտուղէն, աստուածադիր Օրէնք մըն էր, որ կը հաստատեր (Ծննդ.2:17): Իսկ երբ անոնք օրինազանց գտնուելով մեղանչեցին՝ անյիշաչար, մարդասէր Աստուած, իր սերը եւ շնորհքը արտայայտեց, անհնազանդ նախամարդոց մերկութիւնը ծածկելով (Ծննդ.3:21): Օրէնքը այս պարագային, յայտնութիւն էր Աստուծոյ կամքին, իսկ շնորհքը արտայայտութիւնն՝ Աստուծոյ սիրոյն եւ բարութեան, որոնք բոլոր ժամանակներուն ալ գոյութիւն ունեցած են: Աստուածային այդ օրէնքները հետաքային, Մովսէսի միջոցաւ մարդոց տրուեցաւ. այդ օրէնքները կը տարածուին Սինայի անապատներէն մինչեւ Գողգոթայի խաչելութեան ամբողջ ժամանակահատուածին վրայ: Իսկ Շնորհքը կը սկսի եւ կը տարածուի, Գողգոթայի փրկագործական

խորհուրդէն, տիրապետելով մինչեւ Յայտնու-թեան Գիրք ու Եկեղեցւոյ յափշտակութիւն:

Ս. Գրոց մէջ Օրէնքը բոլոր ժամանակաշրջաններուն մէջ գոյութիւն ունեցած է եւ ունի իր տեղը, գործը եւ նպատակը, որ Շնորհքէն բոլորովին տարբեր է: Այսպէս Օրէնքի մէջ Աստուած կ'արգիլէ եւ կը պահանջէ, օրինազանցներուն պատիժներ կը սահմանէ: Սակայն Շնորհքի մէջ Աստուած կ'աղաչէ, չի' պարտադրեր, ազատ կը ձգէ, որ մարդ ինք ընտրէ. ազատ ընտրութիւն կատարելու առիթ կը տրուի: Այլ խօսքով՝ Շնորհքի մէջ Աստուած իր Սէրը կը շնորհէ:

Օրէնքը՝ օրինազանցները կը դատապարտէ: Շնորհքը՝ կը ներէ, թողութիւն կը պարգեւէ: Օրէնքը կ'անհիծէ. Շնորհքը՝ անէծքէ կը փրկէ: Օրէնքը կը սպաննէ. Շնորհքը կը կենդանացնէ: Օրէնքը Աստուծոյ եւ մեղաւոր մարդուն միջեւ հեռաւոր տարածքը, անհասանելի կը դարձնէ: Շնորհքը՝ մեղաւորը Աստուծոյ կը մօտեցնէ:

Օրէնքը կ'ըսէ. «Աչքի դէմ աչք պիտի հատուցանես եւ ակռայի դէմ՝ ակռայ»: Շնորհքը կ'ըսէ. «Մի' հակառակիր քեզի չարիք ընողին: Եթէ մէկը աչք երեսիդ ապտակ գարնէ՝ միւս երեսդ ալ դարձուր անոր» (Մատթ. 5:38-39): Օրէնքը կ'ըսէ. «Թշնամիդ ատէ», իսկ Շնորհքը՝ «սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրինեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէք ձեզ ատողներուն եւ աղօթեցէք անոնց համար» (Մատթ. 5:43-44): Օրէնքը կը հրամայէ. կատարէ՛, գործադրէ՛ պատուիրանները եւ պիտի ապրիս: Իսկ Շնորհքը կ'ըսէ. «Յաւատա՛ եւ պիտի ապրիս»: Օրէնքը նոյնիսկ ամենէն բարի կամ արդար նկատուած մարդը կը դատապարտէ: Իսկ Շնորհքը ձրիաբար կ'արդարացնէ ամենէն չար եւ մեղաւոր անձը: Ղուկ.23:43, Յռոմ.5:15, Ա. Տիմ.1:15, Ա. Կորնթ.6:9-11):

Օրէնքը կը քննէ, կը խուզարկէ, կը քննադատէ եւ կը դատապարտէ. իսկ Շնորհքը կը սիրէ, կը ներէ, կը գթայ: Օրէնքը կը քարկոծէ մեղաւորը. Շնորհքը կ'ըսէ. «Ես չեմ դատապարտեր, գնա՛ ու այլեւս մի' մեղանչեր»: Օրէնքի տիրա-պետութեան, ենթակայութեան ներքեւ ոչխարը կը մեռնի հովիւին համար: Իսկ Շնորհքի տիրապետութեամբ՝ հովիւը կը մեռնի, իր անձը կը զոհէ ոչխարին փոխարէն: Հին Ուխտի մէջ, Օրէնքի հաստատուած եւ քարոզուած օրը, Մովսէս հրամայեց կռապաշտութեամբ եւ անառակութեամբ Աստուծոյ դէմ մեղանչող-ները ները անխնայ սպաննել. երբ գործադրուեցաւ Օրէնքի պարտադրած հրամանը՝ այդ օր երեք հազար հոգիներ սպաննուեցան (Ելից 32:28): Իսկ ընդհակառակը Շնորհքի քարոզուած Պենտեկոստի օրը, երեք հազար հոգիներ փրկուեցան (Գործք 2:41):

Ղուկ. 1:6 եւ Փիլիպ. 3:6 համարները ցոյց կու տան թէ հրեայ մը կրնար արդարանալ Օրէնքի համաձայն, երբ գործադրեր Օրէնքին սահմանած պահանջները: Օրէնք ըսելով կը հասկնանք Մովսէսի Տասնաբանեայ պատուի-րաններն ու ծիսական արարողական կրօնական պարտաւորութիւններն ու պարտականութիւնները:

-Ըստ Հին Ուխտին, երբ հացադրուեր թե հրեայ մը, ինչպե՞ս կրնար կամ կարելի կ'ըլլար արդարանալ իր մեղքերէն, երբ ան Օրէնքի սահմանած պահանջները, պարտականութիւնները գործադրեր կամ լրացներ:

= Մեղաւորը որ օրինազանց գտնուած էր Օրէնքի տասնաբանեայ պատուիրաններուն դէմ, սակայն երբ օրէնքին պահանջած իր զոհը, ընծան կամ կենդանիի արիւնը եափեր, այդ արեան միջոցաւ կ'արդարանար Աստուծոյ առջեւ:

Սակայն Նոր Ուխտի Շնորհքի վարդապետութեամբ, բացի Զրիստոսէ, ո՛չ ոք արդար էր, Ան միակն էր որ չէր մեղանջած Տասնաբանեայ պատուիրաններուն դէմ:

Ա.- Ըստ Հին կտակարանի ուսուցումներուն, գիտնալու եւ ճանչնալու համար **Օրէնքի բնոյթն ու անոր ազդեցութեան մասին կարդալ** Հռոմ.7:12,14,22, Ա. Տիմ.1:8,Գաղ.3:12: Իսկ իմանալու համար թէ Օրէնքը որո՞ւ տրուեցաւ կամ ի՞նչ է Օրէնքին ներգործութիւնը, կարդալ Ելից 20:2, Բ. Օրին.5:1,6, Մարկ.12:29, Հռոմ.2:14, Գաղ.3:25, Հռոմ.7:4-6: Հռոմ.7:7, 3:20,7:8-9, Գաղ. 3:10-24, Յակ.2:10, Բ. Կորնթ.3:7-9, Ա.Կորնթ.15:56:

-Ինչո՞ւ համար Աստուած Օրէնքը տուաւ:

= Որպէսզի յանցաւոր եւ մեղաւոր մարդկութեան ցոյց տայ եւ սորվեցնէ թէ իրենք ու իրենց արարքը սխալ է ու իրենք մեղաւոր. միաժամանակ յիշեցնէ թէ իրենք առանձինս անկարող են արդարանալ եւ զԱստուած հաճեցնել: Նոյնիսկ եթէ ջանան Տասնաբանեայ պատուիրանները պահել, դարձեալ անոնցմով չեն կրնար արդարանալ: Օրէնքը մեզ մինչեւ Զրիստոս կը բերէ, կը հասցնէ, հոն Անոր կ'առաջնորդէ: Փրկուելու համար անհրաժեշտ է Շնորհքը, որ ձրի պարտգել է: Յովհ.1:17, Գաղ. 3:17: Շնորհքի միջոցաւ Աստուծոյ ձրի պարտելը Զրիստոսով միայն մեզի տրուեցաւ: Անո՞վ միայն արդարացում եւ փրկութիւն կարելի է ստանալ Հռոմ.3:20, Գաղ. 2:16-21, 3:11, Հռոմ.8:3, Գործք 13:39, Եբր.7:18:

Բ.- Ի՞նչ է Շնորհքը: Իմանալու համար կարդալ Տիմ. 3:4, Եփես. 2:7, Ա. Տիմ. 1:15, Յովհ. 3:16,Հռոմ.4:5, 5:8:

-Շնորհքի միջոցաւ ի՞նչ է Աստուծոյ նպատակը: Այս մասին գիտնալու համար կարդալ Եփես. 2:8-9, Տիմ. 2:11-13, Հռոմ. 3:24, 5:2, Գործք 20:32, Եփես. 1:6-7, Եբր. 4:16:

Շնորհքը կը փրկէ, կ'արդարացնէ, կը շինէ, կ'ընդունի, կ'ազատէ, կը ներէ, ժառանգութիւն կու տայ, արտօնութիւն եւ դիրք կու տայ, գահ կը պատրաստէ՝ ուր ողորմութիւն կը գտնենք: Մեզի սուրբ կեանք մը ապրիլ կը սորվեցնէ: Մեզի օրինեալ յոյս կը պարգեւէ:

Շնորհք եւ Օրէնք իրարմէ բոլորովին տարբեր ու գատ սկզբունքներ են, որոնք չեն կրնար իրարու նոյնանալ, խառնուիլ Հռոմ. 11:6, 4:4-5, Գաղ.3:16-18, 4:21-31:

Շնորհքով, հաւատացեալը այլեւս օրէնքի ենթակայութեան ներքեւ չէ, այլ կցորդ է Զրիստոսի եւ մեղքի տիրապետութենէն փրկուած, ազատուած է: Մեղքը այլեւս չ'իշխեր անոր կեանքին ու արարքներուն վրայ: «Մեղքը ձեր վրայ պետք չէ իշխէ, քանի դուք Օրէնքին ենթակայ չէք, այլ՝ շնորհքին»

Հաւատացեալը միաժամանակ հետամուտ ըլլալու է բարի, առաքինի, զգաստ, բարեպաշտ, արդար եւ աստուածահաճոյ կեանքի «Ուրեմն ի՞նչ. քանի շնորհքին ենթակայ ենք եւ ոչ Օրէնքին, մե՞ղք գործենք: Բնաւ երբեք» (Հռոմ. 6:1-15):

-Ինչպէ՞ս կրնանք Օրէնքէ եւ անոր տիրապետութենէն ազատիլ:

= Մեղք չգործելով, Աստուծոյ պատուիրանները մեր սրտի տախտակներուն վրայ գրելով ու ապրելով:

Յիսուս Քրիստոսի պատկանելով: Այս ուղղութեամբ կը թելադրուի կարդալ Հռոմ. 7:4-6, Գաղ. 2:19, 3:23-25, Ա.Տիմ.1:8-9:**-Ի՞նչ պէտք է ըլլայ հաւատացեալի կեանքին կանոնը.-**

= Հաւատացեալին կեանքի օրէնքն ու կանոնը պէտք է արձանագրուած ըլլան անոր սրտին մէջ: Հաւատացեալը ջանալու եւ աշխատելու է աստուածահաճոյ, Քրիստոսատիպ կեանք ապրիլ: Այս մասին թելադրելի է աստուածաշնչական հետեւեալ հատուածները Ա. Յովհ. 2:6, 3:16-23, Ա.Պետր. 2:11, Եփես. 4:1-2, 5:1-16, Գաղ.5:16, Ա. Յովհ. 3:10-15, 4:10-21, Եբր. 10:16:

Այս մեկնակետ խորհրդածութիւնները պարզելով, կրնանք եզրակացնել, թե՛ Հին Ուխտի Տապանակը, փոխարինուեցաւ Քրիստոսի արեամբ գնուած Քրիստոնեական Եկեղեցւոյ:

Հին Ուխտի Տասնաբանեայ պատուիրաններու քարէ տախտակները, Քրիստոսով վերածուեցան Նոր Կտակարանի Աստուծոյ Խօսքը պարփակող Աստուածաշունչ մատեանին, Աստուծոյ Խօսքի զօրութեան, որով ճշմարիտ քրիստոնեային կեանքը, կարելի դարձաւ ու փոխակերպուեցաւ կենդանի գիրի, խօսուն վկայութեան, հաւատաւոր կեանքի եւ կենդանարար շունչի: Հոն գտնուող Մանանան՝ կեանք բաշխող ՔՐԻՍՏՈՍԻ:

Հին Ուխտի Ահարոնի բողբոջած գաւազանը՝ քրիստոնեայ եկեղեցւոյ համար, Քրիստոսի Յարութեան խորհուրդը խորհրդանշեց: Կեանք պարփակող գերեզմանը, որ կափարիչով ծածկուած էր մեղսալից մարդոց աչքերէն՝ եղաւ դուռը երկնքի արքայութեան եւ յոյսը յաւիտենական կեանքի խոստումին: Հին Ուխտի մէջ Քահանայապետը, Քաւութեան Տօնին՝ Ուխտի Տապանակին վրայ մարդոց մեղքերու քաւութեան համար՝ արիւն կը սրսկուէր: Իսկ քահանայապետ Քրիստոս, Օրէնքը ի՛ր արեամբ, Շնորհքի փոխակերպուեցաւ եւ Նոր Ուխտը հռչակուեցաւ: «Երկրորդ վարագոյրին ետին՝ կար վրանին միւս սրահը, Սրբութիւն Սրբութեանց կոչուածը, ուր կային ոսկեայ սեղանը՝ խունկ ծխելու համար եւ Ուխտի Տապանակը՝ ներսէն ու դուրսէն ոսկեպատ: Այս Տապանակին մէջ կը պահուէին մանանայով լեցուն ոսկեայ սափորը, Ահարոնի ծախկած գաւազանը եւ Ուխտի տասնաբանեայ պատուիրաններուն քարէ տախտակ-ները: Տապանակին վրայ կային Աստուծոյ փառքը ներկայացնող քերովբէները, որոնք իրենց թելերով հովանի կ'ընէին Քաւութիւն կոչուած կափարիչին վրայ:

...Քահանաներ պաշտամունքը կատարելու համար մշտականօրէն կը

մտնէին վրանին առաջին սրահը: Բայց երկրորդ սրահը միայն Քահանայապետը կը մտնէր, տարին մէկ անգամ, այն ալ՝ իր եւ ժողովուրդին անգիտութեամբ գործած մեղքերուն փոխարէն՝ զոհի արիւնը մատուցանելու համար Աստուծոյ: Այս բոլորով Սուրբ Յոգին ցոյց կու տար, թէ որքան ատեն որ վրանին առաջին սրահը կանգուն կը մնար՝ բուն Սրբարանին մուտքը մեր առջեւ փակ էր, ինչ որ խորհրդանշանականօրէն կը ցուցնէ՝ թէ ներկայիս այդ Սրբարանը բաց է մեր առջեւ: Այնտեղ մատուցուած նուէրներն ու զոհերը չէին կրնար մաքրել պաշտամունքը մատուցանողին խղճմտանքը, որովհետեւ միայն ուտելիքի, խմելիքի եւ ծիսական պէսպէս լուացումներու կապուած էին: Եւ այդ մարմնական կարգերը ի զօրու էին մինչեւ ուղղութեան, այսինքն նոր կարգերու հաստատման ժամանկը:

Բայց երբ Քրիստոս եկաւ, որպէս գալիք նոր կարգերուն Քահանայապետը, մտաւ մեծ, կատարեալ խորանը, որ մարդկային ձեռքերով չէ շինուած. այսինքն՝ այս նիւթեղէն աշխարհին մաս չի կազմեր: Անկկա միանգամընդմիշտ մտաւ Սրբարանը, ո՛չ թէ նոխազներու եւ ցուլերու արիւնով, այլ՝ ի՛ր իսկ սեփական արիւնով, անով մեզի համար յաւիտենական փրկութիւն ապահովելով: Եթէ ցուլերուն եւ նոխազներուն արիւնը սրսկելը, կամ երինջներուն մոխիրը ցանելը կը բաւէն՝ ծիսականօրէն պիղծ մէկը սրբելու համար մարմնական մաքրութեամբ, Քրիստոսի արիւնը շատ աւելին պիտի չընէ՞ միթէ: Արդարեւ, յաւիտենական Յոգիին միջոցաւ Քրիստոս ինքզինքը որպէս անարատ զոհ Աստուծոյ մատուցանեց, որպէսզի իր արիւնով մաքրէ ձեր խղճմտանքը մեռելական գործերէ, եւ դուք կարենաք կենդանի Աստուածը պաշտել: (Եբր. 9:4-15):

